



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



84  
4 - 61



1036  
ՓՐԱՆՍՈՒԱ ԴՀ-ԿԻՒՐԵԼ

# ՆՈՐ ԿՈՒՌՔ

ԹԱՏԵՐԿ ԵՐԵՔ ԱՐԱՐՈՒԵՆՈՎ



Թարգմանեց Տ. Վ.



Թ.ԹԱԼԻԱ — 1906

ԱՐՄԱՆԱԿԱԾ ՊԼԱԺԱՅԱ ԵՐԿԱՋԵՆԵԱՅ ՀԱՆԴԻՍԻԳԻ

34  
-61

20 APR 2008  
19 NOV 2010

84  
4-61

ԳՐԱՆՑՈՒՄ ԴՀ ԿԻՒՐԵԼ

# ՆՈՐ ԿՈՒՇՔ

ԹԱՑ ԵՐԿ ԵՐԵՔ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

Թարգմանեց Տ. Վ.



Թ Բ Ը Լ Խ Ա

Արագատիպ Ա. ՔովաՅթելամբէի, սիկ. 21.

1904

Скоропечатия А. Кутателадзе. Ник. 21

(Արտադպուած և ուժայի երկամբեայ հանդիսէց)

25  
0-2

# Ն Ո Ր Կ Ո Ւ Ռ Ո Ք

Թատերկ երեք արարուածով

## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Дозволено цензурою, Тифлисъ, 3-го Августа 1904 года.

Ալբերտ Դոննա - բժիշկ.  
Մորիս Կորմիէ - նորա  
ընկերու.  
Դենիս - ծառայ.  
Բապտիստ - «

Լուիզա Դոննա - բժշկի  
կինը.  
Ժաննա Լըֆէն - Լուիզայի  
քոյրը.  
Անտուանետտա Միլատ.  
Եւգենիս - աղախին.

## Ե. ԳՈՐԾՈՂ ԱԼ-ԹԱԼԻ

Լուիզա Դոննայի ընդունաբանը. փոքրիկ, գեղեցիկ կահա-  
մորութեամբ սենեակ: Խորքում երեսում է բուխարիկը, որի ձախ  
կողմը մուտքի դուռը, որ վառարանից բաժանւում է ջերմ -  
արգելով, (écran) որ և տանտիրուհու սիրած տեղն է կազմում:  
Առաջնում՝ ձախ կողմը լուսամուա, աչ կողմը՝ դուռ, որ տա-  
նում է տան ներքին բաժինը:

## ՏԵՍԱՐԱՆ I.

### ԼՈՒԽԸ ԵՒ ԺԱՆՆԱ

Լուխզան նստած է կանխազգեստով (reignoire) և գրում է.  
Ժանան մտնում է առաւտեան պարզ հագուստով, երկուսն և  
մոտ 28 տարեկան կանայք:

ԼՈՒԽԸ. (դառնալով նորան եւ ծծիչով ծածկե-  
լով այն նամակը, որ գրում էր): Ա՛, ժաննա: Դու արդէն  
ելե՛ ես: (Համբուրուելով, Բարի լոյս: Երեք եկար հաճոյա-  
խօսութիւններ լսելու:

ԺԱՆՆԱ. Ի՞նչ հաճոյախօսութիւններ:

ԼՈՒԽԸ. Հապա, բո Պօլի երեկուայ ձառը... որ արտա-  
սանուեց Պատգամաւորների ժողովում: Բայց պէտք է ասած,  
որ շտա լաւ կոկեց նոցա, զանազան «Ճշմարտութիւններ» ասե-  
լով՝ այդ բոլոր կաշառակերներին: Ամուսինդ անպատճառ իւր  
ասածը կանէ և այդ պարոններին աւելով զուրս կանեն: Այն  
ժամանակ... դու կդառնաս Խորհրդի նախագահի կին. իսկ յե-  
տոյ՝ ով գիդէ, աշխարհը է...

ԺԱՆՆԱ. (տիրադէմ). Թողի սէր Աստուծոյ, երեակայու-  
թեան ժամանակ չէ...

ԼՈՒԽԸ. Աստուծած իմ, մի բեզ նայիր, ի՞նչ ողբերզական-  
դէմք ես ստացել: Զինի՞ բան է պատահել ձեզ:

ԺԱՆՆԱ. Մեկ ոչինչ չէ պատահել. բայց... Դու լրագիր-  
ներն արդէն կարգացել ես, ուրեմն, եթէ ամուսնուս պերձա-  
խօսութեան մասին տեղեկութիւն ունիս. էհ, բացի դորանից  
ուրիշ բան բեզ չզարմացրե՞ց:

ԼՈՒԽԸ. Ոչ մի լրագրի երես չեմ տեսել. ամուսինս տը-  
սից ելնելուց առաջ պատմեց երէկուայ դէպրերի մասին և կա-  
տարելապէս հիացած է քո Պօլով:

ԺԱՆՆԱ. Այլայլուած չէ՞ր երեւում նա...

ԼՈՒԽԸ. Ըմեննեին: Հանգիստ ու խաղաղ էր, ինչպէս և  
վրշտ:

ԺԱՆՆԱ. Այժմ հիանդանոցումն է:

ԼՈՒԽԸ. Այո՛. առաւտոներն այնտեղ է միշտ:

ԺԱՆՆԱ. Մարդ ուզարկիր այս բոպէիս նրա յետեից:

ԼՈՒԽԸ. Ցնորսուել ես: Մանր հիւանդի համար է:

ԺԱՆՆԱ. Ոչ, ոչ, հենց իրեն համար... Հաւատացնում եմ,

որ գրական պատճառներ ունեմ այսպէս յուզուելու համար...  
Չպէտք է ժամանակ կորցնենք:

ԼՈՒԽԸ. Եթէ այդպէս է, մարդ կուղարկեմ... Բայց ի՞նչ  
եմ ասում, որտե՞ղ կարող են գտնել նորան... Ինձ ասաց, որ  
շուտով տուն պիտի վերադառնայ, մէկը պիտի զար նորա մօտ:  
ԺԱՆՆԱ. Զգիտե՞ս ով պիտի զար:

ԼՈՒԽԸ. Ո՛չ: Վախենո՞ւմ ես...

ԺԱՆՆԱ. Ախ, ո՛չ: Խոստացել են առ այժմ ոչ ոքի չու-  
ղարկեն...

ԼՈՒԽԸ. Ա՛ն, Աստուծած իմ: Ոչինչ չզիտեմ ես. ոչինչ  
չեմ հասկանում: Այդպէս էլ չի կարելի մարդու տանչել, բան  
ասա, որ բան հասկանամ:

ԺԱՆՆԱ. Սիրելիս, հանգստացեր, ամեն բան լաւ կլինի:  
Այս աշխարտմա ամեն բան լաւ է վերջանում: Բանն այն է,  
որ Ալրերտին գատաստանական քննութիւն է սպառնում...  
Առ այժմ լրագիրները միայն ակնարկներ են անում այդ մասին  
իսկականը չասելով, իսկ վաղն արդէն խայտառակութիւնը կը-  
բացուի, օրուայ չարիք կդառնայ...

ԼՈՒԽԸ. Ի՞նչ բանի մէջ են կասկածում: Ի՞նչ կասկած  
կարելի է ունենալ մի մարդու մասին, որ ամբողջապէս կլա-  
նուած է հիւանդանոցներով, հիւանդներով, զիտնական շարա-  
դրութիւնով և զիտութեամբ:

ԺԱՆՆԱ. Անիծուած զիտութիւն: Հէնց այդ է նորա տու-  
շը բանդողը: Նորան մեղագրում են այն բանի մէջ, որ իւր  
հիւանդների վրայ իւր զիտնական փորձերն է կատարել:

ԼՈՒԽԸ. Ի՞նչ որովհետե ինչ որ լրագրի կտոր բամբա-  
սում է, գուր արդէն դատապարտութեան կնիք էր գնում մի  
մարդու ձեկատի, որը մեր ժամանակի ամենաշանաւոր զիտնա-  
կանների առաջին շարբո՞ւմն է կանգնած: Օտարազգիների առաջ  
պարձենալու ժամանակ մենք հանդէս ենք հանում Պաստեօ-  
րին և նորանից յետոյ անմիջապէս տալիս ենք Ալբերտ Դոն-  
նայի անունը: Եւ ի՞նչ: Մէկը մի յիմարութիւն է մտածել և  
միջակութիւնների ամբոխ արդէն պատրաստ է հրձուելու մեծ  
մարդու խայտառակութեամբ: Ամուսինդ շատ լաւ ծանօթ է  
նորա հայեացըների հետ. ի՞նչ է ասում և մտածում նա: Զի՞  
կարծում, որ կորզուստի, գրամ շորթելու (chantage) խաղ է սա:

ԺԱՆՆԱ. Այս, նրա առաջին խօսքն էլ հենց այդ էր:

ԼՈՒԽԸ. Ուրեմն...

**ԺԱՆՆԱ.** Ոստիկանապետը՝ մեզ մօտ էր։ Ամուսնություն այնպիսի կասկածներ կան, որ դժուար թէ ձեր բնակարանը չխուզարկեն... այսօր ժամը 4-ին։ Մինչ այդ ժամանակ կարելի է վտանգաւոր թղթերը թագցնել։

**ԼՈՒԻԶԱ.** Կնշանակէ նոքա ապացոյցներ չունեն, եթէ առաջոր են որոնում։

**ԺԱՆՆԱ.** Եթէ նոքա ապացոյցներ չունենային ամենեւին, այն ժամանակ չէին էլ որոնիլ։

**ԼՈՒԻԶԱ.** Ի՞նչ փորձերի մէջ են մեղադրում նորան։

**ԺԱՆՆԱ.** Ամուսինդ զանազան հիւանդների խլիրդ (cancer, ракի) է պատուաստել։ Ինչպէս երեսում է, դեռ ևս ապացուցած է, թէ կիրդի բշտիկը վարակի՛չ է, թէ ոչ իսկ բանի որ ապացուցած չէ, չեն կարող օգտուել նորանից, իբրև պատուաստի միջոց և բժշկել, ինչպէս Պատահօրն էր բժշկում կատադրութիւնը։

**ԼՈՒԻԶԱ.** Խիրդ... Այո՛, նորա սեղանի վրայ մի մեծ թղթապանակ կայ այդ մակագրութեամբ...

**ԺԱՆՆԱ.** Ամուսինս ասում է, որ այս խնդրում կասկածքոչ մի տեղիք լինել չի կարող։ (Հոռութիւն)։

**ԼՈՒԻԶԱ.** Յիշում եմ, թէ որքան անբաղդ էի նորա հետ... առաջին ժամանակները... որքան տանջուել եմ նորա պատճառով։

**ԺԱՆՆԱ.** Այո՛ մտարերում եմ. Դու խանդու էիր դէպինա, խանդու դէպի նորա զիտութիւնը։ Որքան բացատրում էի քեզ, թէ պէտք է ազատութիւն տալ ամուսնուն իւր պարագանենքների շրջանում, բայց դու ոչինչ լսել անգամ չէիր կամենում։ Այն ինչ՝ ես կենդանի օրինակ էի քեզ համար... Որպիսի տոկունութեամբ օգնում էի իմ Պօլին բաղաքականութեամբ տարուելու գործի մէջ. թէւ, մեր մէջ ասենք, այդ բանն ամենին չէր խանգարում նորան շատ սիրալիր ամուսին լինելու գանգատուելու տեղիք չունիմ, բաղտը մպտում էր ինձ։

**ԼՈՒԻԶԱ.** Բաղդն ինձ է մպտում իմ դժբաղդ կացութեամբ, Ալբերտը չկարողացաւ հասկանալ, թէ մինչեւ ո՞ր աստիճան ամբողջ հոգով նորան էի պատկանում. Վախենում էր արգեօր իմ փաղաքշանքներից, որը խլում էր նորան իւր զիտութեան ձանկից, թէ՛ չէր կամենում ստորանալ, հաւասարուել մի տղէտ կնոջ. Յամենայն դէպս, չնայելով մեր արտաքուստ սրտազեղ յարաբերութեան և համաձայնութեան, մենք օտար էինք միմեանց համար... Նա նոյնքան օտար էր ինձ համար, որ-

բան ահա այն պարոնը, որ անցնում է փողոցով. Ի՞նչ արած, իմ բաղդս էլ է մպտում ինձ համար, այս միջադէպը, յաջողութիւն պիտի համարեմ։

**ԺԱՆՆԱ.** Իշարկէ, այսպիսի հանգամանքներում, այս ըռպէիս շատ կլիներ, եթէ ձեր մէջ էլ այնպիսի սրտազեղ յարաբերութիւն լինէր, ինչպէս իմ և ամուսնուս մէջ կայ։

**ԼՈՒԻԶԱ.** Այո՛, սրտով անտարբեր եմ... բայց ներսս, կարծես, մի բան աւերուեցաւ, փշրուեց. Անհունս էի յարգում ամուսնուս նորա կեանքի խստութիւնն ու մաքրութիւնը, մտաւոր ունակութիւնների լարումը՝ մարդկային տանջանքները թեթևացնելու մեծ գաղափարն իրագործելու համար... մարմական տանջանքները նկատում էր իսկ... (արտասուելով), հոգեկան տանջանքները նա չէր ըմբռում։ Տասը տարի նա կողբէ-կողը ապրել է հոգեկան տանջանքների հետ և չէ՛ նկատել. Այո՛, պարծենում եմ, որ տանջուել եմ և դժբաղդ եմ եղել այդպիսի հրէշի հետ։

**ԺԱՆՆԱ.** Լուի՛զա, ի՞նչ կարիք կայ անարգական խօսքեր ասելու։ Նա հրէշ չէ։ Նա պարզապէս փառասէր մէկն է։ Պօլլ միանգամից այդպէս կոչեց նորան. Կարիք էլ չունենք բանը մեծացնելու, ուղանելու։ Այդ անպիտանի ձեռքին դու երբէք ստորացած չես երեացել ուրիշներին։

**ԼՈՒԻԶԱ.** Նորա գոռողութիւնը ինձ ընկճում էր, բայց միենայն ժամանակ այնքան համեստ ու պատրաստակամ էր խեղդ, դժբաղդ մարդու հետ, որ... ինչպէս զայրանայի. Իսկ երբեմ ուղղակի սրանելի էր, հիանալ կարելի էր... Վտանգների վայրկեաններին, համաձարակների ժամանակ—հանդիս, անխռով, կատարելապէս վստահ իւր վրայ և, պէտք է կարծել, այն ներքին զգացմամբ, թէ ինքն այդ ամրուի բարերարն է, որին ինքը ծառայում էր և որին պատկանում էի և ես... ինչպէս ինչպէս այդ ծովի կաթիլներից մինը։

**ԺԱՆՆԱ.** Յիշում եմ, երբ նա վարակուեցաւ բկացաւով և վտանգաւոր կերպով հիւանդ պառկած էր, դու ինսպում էիր նորան... և անկեղծ վշտակցութիւն ու ցաւակցութիւն էիր զգում։

**ԼՈՒԻԶԱ.** Այո՛, այն ժամանակ ես հոգով-մարմով նորան ինամելուն էի նուիրուած, յանուն այն դժբաղդների, որոնց ցաւերին թեթևութիւն էր պարզեւում նա. ես կամենում էի բարութեամբ բարութիւն հատուցանել նորան. Բայց, հենց որ

առողջացաւ, նորից ինձ իւր տաղանդի ու գիտութեան ոտքերի տակ շպրտեց: Այո՛. և նկատե՞ց արդեօք զոնէ իմ անձնուեր հոգատարութիւնս: Ինձնից առաւել ճարտար հիւանդապահ, զթութեան-քոյր կը գտնէ՞ր արդեօք: Այն, ինչ որ իմ հոգու մէջ էր կատարւում, նա ըմբռնեց, չհասկացաւ: Այո՛, իրաւունք ունիս: Ճշմարիտ ես ասում, որ մեծ երջանկութիւն է, որ ես սրտագին կապ չունիմ ամուսնուս հետ և բո հաղորդած զարչուրելի լուրդ... ինձ միանգամայն ազատում է նորանից: ԺԱՆՆԱ. Ի՞նչպէ՞ս...

ԼՈՒԻԶԱ. Այժմենից ինքս ինձ կատարելապէս ազատ եմ համարում... վճռեղի... ամեն ինչ վերջացած է...

ԺԱՆՆԱ. Ի՞նչ արած, արդարացին էլ այդ է: Ամուսնուդ չես սիրում, զաւակներ չունիր... փակուիր սենեակիդ չորս պատերի մէջ... և...

ԼՈՒԻԶԱ. Եւ կենդանի թաղուեմ, չա: Տարօրինակ ազատութիւն կլինէր... Որովհետեւ Ալբերտն արժանի է բանտի, ուրեմն ե՛ս էլ եմ արժանի... Ո՛չ սիրելիս, ես կամենում եմ ճաշակել բաղդատորութիւնը: Իմ ազատութիւնս այն կլինի, որ ես կլսեմ սրտիս բարախի ձայնին և կը հետեւ նորան...

ԺԱՆՆԱ... Օ՛, բանը սրտին է վերաբերում: Ուրեմն դու սիրում ես արդէն մէկին: Այն ժամանակ ես և Պոլն էլ ինչո՞ւ ենք աշխատում ձեր ապահովութեան մասին, եթէ դու բո ապահարզանովդ...

ԼՈՒԻԶԱ. Քեզ ո՞վ է բան ասում ապահարզանի մասին: ԺԱՆՆԱ. Տէր Աստուած. չէ՞ որ ինքդ են ակնարկում քո սրտի ձայնի, ազատութեան կանկութեան մասին... 2եմ հասկանում ի՞նչ ես ուզում, ինչ բանի ես ձգում...

ԼՈՒԻԶԱ. Այս, մի՞թէ կարող եմ, ընդունակ եմ այս րոպէիս այդ բոլորը կշորադատել... միանգամից: Մի ժամ առաջ ինձ յաւետեան կապուած էի զգում...

ԺԱՆՆԱ. Հանգստացիր, ամեն բան կարդի կընկնի: Ոչինչ ի խորտակիր, այդ յուզումն ու փարանմունքը կանցնի և Ալբերտն այլ ևս այնքան դատապարտելի չի թուալ, նա կփոխուի: (Համբուրելով նորան). Լուիզա, վստահ եղեր վրաս, ասա ինձ: Ո՞վ է նա,

ԼՈՒԻԶԱ. Մօրիս Կօրմիէն.

ԺԱՆՆԱ. Ի՞նչ, գարձեալ գիտնական, կըկին գիտութեան

մարդ... գիտութեան: Մի՞թէ բաւական չէ բեզ համար գիտութիւնը...

ԼՈՒԻԶԱ. Նա ուսումնասիրում է հոգեբանութիւնը, ուսումնասիրում է մարդկային հոգին: Երիտասարդ գիտնականների շրջանում նա յայտնի է արդէն իւր երկերով: Այն ամենն, ինչ որ կատարւում է մեր մէջ, ինչ որ յուզում, ուրախացնում է մեզ, այդ բոլորը ուսումնասիրել է նա: Գոնէ, կարելի է ասել, որ կին արարածը տարիներով աննկատելի ու անհասկանալի չի մնայ նորա հետ:

ԺԱՆՆԱ. Այո՛, բո վշտերին ու տանջանքներին նա յունարէն կամ յատիներէն մի անուն կտայ: Սակայն, պէտք է խոստովանել, որ նա վայելչակազմ զուզուած, կոկիկ, ի՞սկ տղամարդ է: Ընդհանուր առմամբ վատ չէ, բայց ես ամուսնուդ աւելի գերակշութիւն կտայի, բան նորան:

ԼՈՒԻԶԱ. Է՛, դու սիրահարուած ես բո Պոլի վրայ. դու լաւ գատարոր լինել չես կարող:

ԺԱՆՆԱ. Այսօր թէկ բարկացած եմ Ալբերտի վրայ, բայց ես նորան կգերադասէի... նա աւելի նշանաւոր է... և, պէտք է խոստովանել, աւելի խելօք, բան Կօրմիէն: Դու, կարծեմ, նորա հետ այստեղ ես ծանօթացել. նա ամուսնուդ մօտ էր գալիս, իւր գրուածներն ուղղել տարու համար:

ԼՈՒԻԶԱ. (Ժապտալով). Ամեննեին էլ ուղղել տալու համար չէր գալիս... «Զղայնութեան մասին» իւր գրուած երկի մէջ մի բանի բժշկական տեղեկութիւններ էր պակաս... և ամուսինս մասնակցում, օգնում էր նրա գրուածքին:

ԺԱՆՆԱ. Է՛, լաւ, ասա ինդրեմ, Կօրմիէն իւր բոլոր հոգեբանութեամբ կոաչէ՞ց (s'aviser, դօգաձաթեա) այն տպաւորութեան մասին, որ թողեց բեզ վրայ:

ԼՈՒԻԶԱ. Օ՛, ո՞չ ես շատ զգոյշ էի պահում ինձ: Ամբողջ ժամանակը փախարուշ յարգանքով ու բարեկամական մէծարանքով էր վերաբերում ինձ: Եւ միայն երեկ էր, որ անյարմար գրութեան մէջ զրին ինձ:

ԺԱՆՆԱ. Կնշանակէ միայն երեկ արտայայտեց... խորամանն է: Իւր շրջանում երեկ արդէն յայտնի էր, թէ ինչ պիտի պատահէր բեզ...

ԼՈՒԻԶԱ. Պատահականութեան արդիւնք էր:

ԺԱՆՆԱ. Եւ դու անյոդդո՞դ էիր:

ԼՈՒԻԶԱ. Ապագուցանել կարող եմ: Աչա այն նամակը,

որ զրել եմ քո գալուց առաջ... Պատուիրում եմ, որ այսուհետեւ չհամարձակուի ինձ մօտ գալ: (Հովհանն հանում է ծծատեսրից (buvard) նամակը: Մինչ դեռ ժամանան կարդում է): Որևէ է տեղիք կայ գրածիս մէջ, որ սպասէի, թէ իմ հրամանուչի կատարուիլ:

ԺԱՆՆԱ. (Ծետ դարձնելով նամակը): Խիստ կտրուկ է: Նոյն իսկ տողամէջ կարդալ ու բան հասկանալ չի կարելի... Լաւ է:

ԼՈՒԻԶԱ. Այո՛, լայց... դժբաղդարար՝ շատ լաւ է: (Նամակը պատուելով): Ահա թէ ինչ կանեմ այս նամակը:

### ՏԵՍԱՐԱՆ Ⅱ.

ԼՈՒԻԶԱ, ԺԱՆՆԱ ԵՒ ԲԱՊՏԻՍՏ.

ԾԱՌԱՆ. Մի ջահէլ աղջիկ՝ պարոնին է հարցնում: Ասում է, որ իրեն ճանաչում է: Ասում է, հիւանդանոցումն է եղել պառկած: Եւ պարոնն, ասում է, սպասում է այսօր իրեն: ԼՈՒԻԶԱ. Ասա, յետոյ թող գայ:

ԾԱՌ. Նամակ ունի, ասում է:

ԺԱՆՆԱ. Քիչ առաջ ասացիր, որ շուտով տուն պիտի գայ բժիշկը:

ԼՈՒԻԶԱ. Ճշմարիտ որ... Թող բիչ սպասէ: (Բապտիստը դուրս է գնում):

ԺԱՆՆԱ. Եւր ապագայ հիւանդներից մէկը, Ինչո՞ւ է այս տեղ կանչել:

ԼՈՒԻԶԱ. Յիրաւի, որ տարօրինակ է: Գուցէ սա էլ այն... զոհերից է, որոնց պատուաստում էր... Պէտք է տեսնեմ նորան: (Զանգ է տալիս. ծառան մտնում է): Աղջկանն ասա, թող ներս գայ:

### ՏԵՍԱՐԱՆ Ⅲ.

ԼՈՒԻԶԱ, ԺԱՆՆԱ, ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ.

Վատառողջ, նիշար մի մատաղահաս աղջիկ, որին կարե- լի էր գեղեցիկ համարել, եթէ հիւանդու տեսք Սպիտակ զլիւակապ և կապոյտ կրկնոց (pelerine) — ոլրանոցի:

զգեստով: Ակզրում շատ ամաչկոտ և քաշուող, յետոյ բացւում և ազատ խօսում է:

ԼՈՒԻԶԱ. Կկամենայիր ամուսնու տեսնել: Զգիտեմ, կը- յաջողուի՞ արդեօք:

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ. Ինձ գրել է, որ ժամը 10-ի մօտելը...

ԼՈՒԻԶԱ. Նա բաւական մոռացկոտ է: Ուրախութեամբ կչաղորդեմ նորան այն ամենն, ինչ որ ունիր ասելու:

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ. Ընորհակալ եմ, սակայն...

ԼՈՒԻԶԱ. Ա՛, ինդիրն ուրեմն բժշկական խորհրդակցու- թեան է վերաբերում:

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ. Այո, Տիկին,

ԼՈՒԻԶԱ. Ամուսինս բժշկում էր ձեզ:

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ. Այո տիկին... թոքախտից:

ԼՈՒԻԶԱ. Եւ այժմ... աւելի լաւ էր զգում ձեզ: ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ. Շատ առաւել լաւ: Մեր բժիշկը՝ էր հաւա- տում իւր աչքերին: Եթէ մինչև տարուայ վերջն առողջանամ բոլորովին, ինձ կընդունեն մեր վանրի գթութեան-բյուրերի շարքում:

ԼՈՒԻԶԱ. Դուք կամենում էր գթութեան-բյուր գառնալ: ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ. Այո, տիկին եթէ ոյժերս ու առողջութիւնս բոլորովին վերադառնան. պէտք է ոյժ ու զօրութիւն ունենալ, որպէս զի մարդ հիւանդներին ինամել կարողանայ:

ԼՈՒԻԶԱ. Եւ ուրեմն յատկապէս վանրից եկել էր ամուս- նում տեսնելու: Դուք նորան շատ մեծ հաւատ էր ընծայում:

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ. Ախ, Տէր իմ Աստուած. ի՞նչպէս հապա- չաւատ ըլնծայեմ: Մի հարցնէիր դուք, թէ ինչ գրութեան մէջ էի հիւանդանոցում... Ոչ ոք չէր հաւատում, որ կարող կլի- նիմ փրկուել. պարօն Դոննան էլ, միւսներն էլ, նմանապէս: Մի- անգամ, երբ կարծում էր, որ ուշաթափ եմ, իւր օգնականին ասաց, որ երեք օր էլ չեմ ապրիլ:

ԼՈՒԻԶԱ. Բայց և այնպէս փրկեց բեզ:

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ. Նա պիտիսի գիտնական, այնքան բարի և համբերատար է: Գթութեան-բյուրերի մէջ անգամնորա չափ բա- րի անձնաւորաթեան բիչ կըպատահի:

## ՏԵՍԱՐԱՆ IV.

ԼՈՒԻԶԱ, ԺԱՆՆԱ, ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱՆ ԵՒ ԱԼԲԵՐՏ.

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱՆ. (Տեսնելով Ալբերտին բացականչում է): Պարո՞ն Բժիշկ! (Չեոք է մեկնում նորան, որը իւր երկու ծնորհերի մէջ է առնում նորա մեկնած ծնորը)։

ԱԼԲԵՐՏ. Անտուանետտա... ճշտապահ... ապրես: (Նաև կնոջը): Եեզ այստեղ հրաւիրեցին:

ԼՈՒԻԶԱ. (Շփոթուած). Այո, ես...

ԱԼԲԵՐՏ. (Սառնութեամբ): Լաւ, լաւ. (բարեւելով ժաննային): Բարե, ժաննա:

ԺԱՆՆԱ. Երկու խօսք...

ԱԼԲԵՐՏ. Խնդրեմ. (Նայելով կնոջը. վերջինս Անտուանետտայի հետ դիմում՝ է դէպի բնմի խորը): Ի՞նչ կայ: ԺԱՆՆԱ. Դուք գիտէք, թէ ինչ կայ:

ԱԼԲԵՐՏ. Ա՛, իմ նշանաւոր ոճիրս: Դուք կամենում էք իմանալ՝ ձիշդէ: Ձիշդէ, Ա՛, տեսնումէք (ցոյց տալով Անտուանետտային եւ կնոջը) կարելի էր և առանց լրտեսութեան... ԺԱՆՆԱ. Եեզ համար անհասկանալի է, որ ձեր մասին անհանդստացողներ կան: Ի՞նչ, ձեր կարծիքով, պէտք էր թողնել, որ աղջկը պատասխանէր ձեր ծառաների հարց ու փորձին:

ԱԼԲԵՐՏ. (Ժպտալով). Իսկ ձեր հարց ու փորձին ինչ պատասխանեց:

ԺԱՆՆԱ. Որ նա ձեզ պաշտում է: Ես կարիք չունեի ոչ ոքի հարց ու փորձի ենթարկելու, ես զիտեմ... ոստիկանապետից, որ մեզ մօտ էր և այնպիսի տեղեկութիւններ էր բերել, որ վնաս չէք ունենայ, եթէ դուք էլ իմանաք:

ԱԼԲԵՐՏ. Ես արդէն միջոցներ եմ ձեռք առել: Պատաշեցի ձեր ամուսնուն... Բայց առանց այդ էլ նախատեսնում էի այդ բոլորը և երէկ արդէն խնդրել եմ բարեկամներից մէկին, որ դայ և տանէ թաղցնէ այն թղթերը, որ այստեղ պահելը բաւական վտանգաւոր է. նա կդայ տանելու 12-ից յետոյ: Եկողը Մօրիս Կօրմիէն է. դուք ձանալում էք նորան. մի երիտասարդ, որին աշխատակցում էի հիպոտիզմի մասին գրուած մի յօդուածի մէջ:

ԺԱՆՆԱ. Ճանաչում եմ նորան: Նա մի մեծ առաւելու-

թիւն ունի, — զիտէ լոել: Մէկը, որ երէկ երեկոյեան խօսում էր ձեր մասին նորա հետո... Էլ չկասկածեցի, անգամ թէ նա առաւտեան տեսնուել է ձեզ հետո:

ԱԼԲԵՐՏ. Ո՞վ էր խօսողը:

ԺԱՆՆԱ. Մի առանձին նշանակութիւն չունի այդ: Ուրեմն ամեն բան յաւ կերթայ:

ԱԼԲԵՐՏ. Օ՛, այո՛. յշս ունիմ:

ԺԱՆՆԱ. Եւ դուք հանդիսաւ էք:

ԱԼԲԵՐՏ. Բոլորովին:

ԺԱՆՆԱ. Իսկ ձեր խի՞զքը...

ԱԼԲԵՐՏ. Խիշճան և ես—մի ամբողջութիւն ենք կազմում: ԺԱՆՆԱ. Ուրեմն աւելի վաս:

ԱԼԲԵՐՏ. Սիրելի՛ս, (ցոյց տալով Անտուանետտային):

Նայիր այս անմեղ երեխային. նա թոքախոսվ վարակուած է մինչեւ ոսկրների ծուծը և մինչեւ աշուն էլ չի քաշիլ... Ենթադրեցէք, որ նորան մի զարհուրելի հիւանդութիւն եմ պատուաստել, մի հիւանդութիւն. որ յամենայն դէպս մահացու է և երեկակայեցէք, որ այդպիսով հնարաւորութիւն եմ ստանում գտնել այնպիսի մի միջոց, որով կարող պիտի լինեմ ազատել այդ հիւանդութիւնից առողջ, կենունակ մայրերի... Ենթադրեցէք... Սակայն մի էլ ենթադրեց... ինչ որ պէտք էր անել՝ արուած է: Եւ, առանց ձշմարտութիւնը թագցնելու, ասացէք, մի՞թէ ես յանցագործ եմ չէնց այն պատճառով, որ քննում եմ այդ խղճուկ, լղրձուկ մարմինը որ դատապարտուած է յօտալուտ մահուան տազնապի, և այդպիսով պիտի գտնեմ այն գաղտնիքը, որ ամբողջ սերունդներ պիտի փրկէ...

ԺԱՆՆԱ. Այդ խղճուկ մարմինը գեռ ևս կեանք ունի. նա կարող է զիյադրել, առողջանալ:

ԱԼԲԵՐՏ. Ի՞նչ էր խօսում: Կարծէք ես բանից տեղեկութիւն չունեմ: Նա անյօյս կորածներից է:

ԺԱՆՆԱ. Բայց կարող է պատահել, վերջապէս, որ սխալուէք: Դուք Աստուած չէք: Է՛, ենթադրեցէք մի բոպէ, որ թոքախոսից փրկուի և մայ այդ մահացու հիւանդութեամբ, այն ժամանակ ի՞նչ կանէք:

ԱԼԲԵՐՏ. Այն ժամանակ մի բան է մնում միայն—ատըրաձանակը աշկատիս դնել:

ԺԱՆՆԱ. Ա՛ս, Ալբերտ, միթէ այդպիսի բան կարելի է ասել:

**ԱԼԲԵՐԾ.** Եւ կասեն և կկատարեն: Սպանե՛լ այդպիսի հիանալի, սքանելի արարած... Նա ինքը մարմնացած բարութիւն է, որ պատրաստ է զոհել իրեն մերձաւորի համար, առանց որեւէ աղեղ շարժափթների: Նա պաշտում է ինձ. ինձ նախախնամութեան առաքեալ է համարում, որն ամոքում է մարդկութեան տանջանքները: Եւ այդ հիացումն ու սքանչացումը— իմ միակ «պարգև» ու է: Միթե դուք ենթադրել կարող էք, մի բովէ անզամ, որ ես թեթևեմտութեամբ կարող էի մաշուան դատապարտել նորան: Ո՞չ. և, դժբաղդարար, կարող եմ վազօր ասել նորա մահուան օրը, գուցէ և ժամը:

**ԺԱՆՆԱ.** Զարմանալի կուրօրէն հաւատ էք ընծայում ձեր գիտութեանը:

**ԱԼԲԵՐԾ.** Ես հաւատ եմ ընծայում ականջիս, որ ըմբռում է կերուած-մաշուած թոքերի ծանր շնչառութիւնը, ես հաւատում եմ աչքիս, որ որոշում է խոշորացոյցի տակ եղած մանրէները, ես հաւատում եմ բազկերակի անկանոնութիւնը որոշող զգայնութեանս, ես հաւատում եմ...

**ԺԱՆՆԱ.** Դուք չափազանց հաւատում էք... Զեր հաւատը բաւական կիխէր զիւղական մի ստուար ամբոխի համար: Ես չէի կարծում, որ դուք այդքան դիւրահաւատ էք, իմ բարեկամ: Սակայն, մեկնելուց առաջ, թոյլ տուէր մի փորբիկ խուրհուրդ տալ ձեզ: Զեր ամուսինը գրգուած է ձեր դէմ, բայց վերջնականապէս յարաբերութիւնը խզելու մատին չէ մտածում. գուցէ Լուիզան առանց մտածելու մի բան կասէ, ուշադրութիւն չը դարձնէք... Նորա մասին երաշխաւորում եմ... ընտանիքի մէջ պէտք է համերաշխ լինենք:

**ԱԼԲԵՐԾ.** Դուք պատուական կին էք, Ժաննա, (սղմուլ է նրա ձեռքը):

**ԺԱՆՆԱ.** 8' տեսութիւն: (Մօտենում է Լուիզային եւ երկուն եւս կամենում են դուրս զնալ):

**ԱԼԲԵՐԾ.** Լուիզա, սպասիր ինդրեմ:

**ԺԱՆՆԱ.** 8' տեսութիւն:

## ՏԵՍՍՐԱՆ V.

ԼՈՒԻԶԱ, ԱԼԲԵՐԾ ԵՒ ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱՆ:

**ԱԼԲԵՐԾ.** (Առանձնակի կնոջը): Դու կամենում էիր ի-

մանալ այս աղջկանից... Այժմ կենդրեմ ներկայ լինել Խորհրդակցութեան ժամանակ. (Լուիզան բացասական շարժում է անում): Ո՞չ, ո՞չ, ես այդպէս եմ կամենում: Ոչ ոքի դատաստանից չեմ վախենում: Միայն թէ գիտենային... (Անտուանետտային): Զեզ չի խանգարում ամուսնուս ներկայութիւնը: Անտուանետտան սիրավիր հայեացք է ծգում: Լուիզան նստում է բազկաթոռի վրայ. Ալբերտը ընթառիչ եւ հովանաւորողի ձեւով քոնում է Անտուանետտայի ուսերից եւ նրա երեսը լոյսին է դարձնում): Օ՛, բաւական լըցուել ենք: Ալբերն այլ ևս այնքան չեն փայլում: Ի՞նչպէս է քունդ:

**ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱՆ.** (Ուրախ) Ինչպէս արջամկանը (marmotte, սյորէ):

**ԱԼԲԵՐԾ.** Ախորժա՛կդ:

**ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱՆ.** Լաւ. առհասարակ ամեն ինչ լաւ է:

**ԱԼԲԵՐԾ.** Այո... շնչառութիւնը կկամենայի լսել. անցէք մահճարգելի յետել և հանեցէք ձեր սեղմիրանը, (corsage): (Անտուանետտան մահճարգելի յետելից, իսկ Ալբերտը սենեակից): Եթէ ամեն ինչ այսպէս լաւ է, էլ ինչո՞ւ էիք գրում ինձ ձեր անհանգստութեան մասին: Ի՞նչն է անհանգստացնում ձեզ:

**ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱՆ.** (Անվատահաբար): Գիտէք ի՞նչ, բշտիկի պէս մի բան է, բայց չի մեծանում. (Լուիզան յուզմամբ լսում է): Օ՛, ասենք հազիւ-հազ երեսում է... Եւ ուշադրութիւն անգամ չէի դարձնիլ, բայց ծծիչ-սրուակ (ventouse, ճանակա) զնող բոյրը նկատեց... Ես մտածեցի, թէ, բանի որ դուք կամենում էիք ամեն բանի մասին տեղեկութիւն ստանալ, ամենայն մանրամասնութեամբ... Եւ այնքան ուրախացայ, որ դուք իսկոյն և եթ պատասխանեցիք ինձ...

**ԱԼԲԵՐԾ.** (Դնալով նրա մօտ): Լաւ, լաւ: Որտե՞ղ է այդ բշտիկը: (Երեսում է բժշկի զլուկը, որ թեքում է դիտելու համար): Զի՞ ցաւում, երբ սեղմում եմ: Լաւ: (Մի քանի քայլ յետ ու առաջ է զնում սենեակի մէջ առանց նայելու կնոջը): Գիտեմ:

**ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱՆ.** Վտանգաւոր բան չէ:

**ԱԼԲԵՐԾ.** Ոչ... Այստեղ ձեր բժշկին ցոյց տո՞ւիք:

**ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱՆ.** Այո... ասում էք, որ դատարկ բան է:

**ԱԼԲԵՐԾ.** Նորա անունը Վերգիկ չէ:

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ. Այո՛, Վերդիէ:

ԱԼԲԵՐՏ. Ճանաչում եմ, իս նախկին ընկերակիցս է:  
ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ. Այո՛, ինչպէս չէ: Եւ որքան սիրում  
է Ձեզ:

ԱԼԲԵՐՏ. (Հեղինօրէն). Զափաղանց ուրախ եմ: Է՛, այժմ  
տեսնենք թոքերը: (Ականջ է դնում): Ընկեցէք. ուժո՞վ. աւելի,  
աւելի՞ ուժով. ուժո՞վ եմ ասում ձեզ... Հազարէք. հազարէ...  
(Կրդովուած շարունակում է): Ոչինչ չկայ: (Ուղղում է, սե-  
նեակն աշքի է անցնում եւ դիտում է աղջկանը): Ի՞նչ էք  
այդպէս նայում ինձ:

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ. Որև է բանով դժգո՞չ էք ինձնից: Մի՞  
թէ նորից վատացել է:

ԱԼԲԵՐՏ. (Կոպտութեամբ): Դուք առողջացել էք...  
բոլորովին:

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ. Ճշմարիտ է... Ճշմարիտ է ինձ այ-  
ժը բոլորովին ուրիշ տեսակ եմ զգում, կարծէք ուրիշ մարդ  
ինեմ... Եւ բոլոր բժիշկները, բշրերը, ամենքն ասում են..  
ԱԼԲԵՐՏ. Ի՞նչ էք արել.

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ. Ալսինքն, ինչպէս թէ ի՞նչ եմ արել:

ԱԼԲԵՐՏ. (Անհամբերութեամբ): Ի՞նչ էիք ուտում, ինչ-  
պիսի՞ կեանք էիք անցնում:

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ. Ինչպէս պատուիրել էիք: Ամեն ինչ ճշ-  
տութեամբ կատարել եմ, ինչ որ սահմանել էիք. միայն մի  
բան...

ԱԼԲԵՐՏ. Ի՞նչ, դէ՛չ ասացէք վերջապէս:

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ. Մի բարկանաք վրաս, ինդրեմ: Ամեն ա-  
ռաւոտ բիշ շատ բիշ Լուրդի սուրբ ջուր էի խմում:

ԱԼԲԵՐՏ. (Շուր զալով մի բանի բայլ է անում սե-  
նեակում, ապա նորից դառնում է դէպի նորան մոայլ եւ  
համարեա սպառնալից): Հագնուցէք:

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ. Ի՞նչ... բարկացա՞ք: Ներեցէք, ինդրեմ, ես  
չէի կամենում ասել... Բայց ինձ թւում էր, որ Աստուած կը-  
պատժէր ինձ, եթէ չխոստովանէի: Դուք կարծում էք, որ չե՞մ  
հասկանում, թէ մինչ որ աստիճան շնորհապարտ եմ ձեզ:

ԱԼԲԵՐՏ. Թողէք, ի սէր Աստուածոյ, ես այդ մասին չեմ մը-  
տածում:

ԼՈՒԻԶԱ. (Մօտենալով Անտուանետտային): Լսեցէք սի-  
րելի աղջիկս, վերադարձէք վանք և յայտնեցէք մայրապետին,

որ ինքս անձամբ կգամ և կինդրեմ, որ ձեզ թողնեն մի քանի  
ժամանակ մեզ մօտ ապրելու համար: Ամուսինս ամենաին չի  
բարկանայ: Նա սիրում է ձեզ, կկամենար անձամբ հետեւել հի-  
ւանդութեան ընթացքին: Դուք այստեղ հանգիստ կլինէք. ձեր  
կրօնական զգացումներին կվերաբերուենք ամենայն յարգանքով:  
Հաւատացէք նախախնամութեան, աղօթեցէք և յուսացէք:

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ. Միթէ վտանգաւոր դրութեան մէջ եմ:  
ԼՈՒԻԶԱ. Ո՛չ. անհանգիստ մի լինիք: Ապրեցէք մեզ մօտ  
և մենք լաւ բարեկամներ կդառնանք: (Համբուրում է նորա  
ճակատը, զնում է դէպի դուռը եւ արագ վերադառնում  
է դէպի ամուսինը):

## ՏԵՍԱՐԱՆ VI

ԼՈՒԻԶԱ. ԵՒ ԱԼԲԵՐՏ

ԼՈՒԻԶԱ. Մարդասպան:

ԱԼԲԵՐՏ. (Մաղմօրէն). Այո՛, մարդասպան...

ԼՈՒԻԶԱ. Ի՞նչ աւելի ստոր, զարշելի բան կարող է լի-  
նել, բան այս ոճրագործութիւնը: Խեղճ, անօդնական անպաշտ-  
պան մի որբ և...

ԱԼԲԵՐՏ. Նա մեռնում էր: Ես ամեն չնար գործ գրի նո-  
րան փրկելու համար: Ի՞նչ գրութեան մէջ էր նա: Եթէ որև  
է բժիշկ ասէր նորան, թէ ազատելու չնար կայ, մենք այդպի-  
սինին իւելազար կանուանէինք: Ի՞նչ վնաս կարող էի տալ նո-  
րան: Նա նոյն իսկ խայլոցն անգամ չզղաց, — ես պատուաստե-  
ցի նորան ուշաթափ եղած ժամանակ, և միայն վեց ամսից  
յետոյ հիւանդութիւնը պիտի երեար, իսկ վեց ամիսը նորա  
համար... ամբողջ յաւիտենականութիւն է:

ԼՈՒԻԶԱ. (Հեղինօրէն). Եւ յանկարծ չի կամենում  
մեռնել:

ԱԼԲԵՐՏ. Ա՛մ, այո՛, տեսնում եմ, որ մեղաւոր եմ: Կեան-  
քիս մէջ առաջին անգամն եմ տեսնում... Երեակայել չես կարող  
այն բոլոր նախազգուշութիւնները, որ բանեցնում էի փորձե-  
րի ժամանակ, որ մի բոպէ անգամ չկարձէի հիւանդի կեանքը:  
Հիւանդութեան մահապիթ բնական ընթացքն աւելի կանուխ  
էր հասնում, բան փորձերիս հետեւանքը: Եւ որքա՞ն դիտողու-  
թիւններ է կորել իդուր...



**ԱՌԻՒԶԱԸ.** Մի խօսքով, դու մի ձեռքով հիւանդին էիր բժշկում, ներքուստ՝ վախենալով բարեյաջող ելքից, այն ինչ միւս ձեռքով մահացու վէրը էիր տալիս նորան:

**ԱԼԲԵՐՏԸ.** Խս անյողդողդ հաւատում էի... գուզէ ծիծաղելի կթուայ, որ հիւանդութեան որոշումն անսխալ է:

**ԱՌԻՒԶԱԸ.** Բայց դու այնքափ խելք ունիս, որ պէտք է զգայիր և վտանգաւոր հետևանքը: Կարող էր հրաշք պատաշել և դորա ապացոյցն աչքերիս առաջն է.—այդ հրաշքը պատահեց: Յիշիր զգայնութիւնը, ներշնչումը, մարդկային նեարդերի բոլոր խորհրդաւորութիւնը, որոնք մարդուն հիւանդութեան անկողնից ոտքի են կանգնեցրել, բեզ պէս հաւահմաներին առաւել զարմացնելու համար: Պէտք էր մտածել ե հրաշքների մասին:

**ԱԼԲԵՐՏԸ.** Երբէք առիթ չեմ ունեցել գիտնու նոցա,

**ԱՌԻՒԶԱԸ.** Եթէ գիտէիր էլ, դարձեալ նշյնը կիխնէր: Ամեն թան ապացոյցը ձեռքին բացատրելու անյագ ծարաւդ ոչ մի բանի առաջ չէր կանգնիլ: Մի' ստիր. յիշում ես, մօտ օրերս, ճաշի ժամանակ, ի՞նչ պատասխանեղիր այն զգայուն տիկնոցը, որ նողկանք էր զգում կենդանահերձական փորձերից: Ի՞նչ պէս կարմրեցիր և սկսեցիր ապացուցանել, թէ «ի՞նչ նշանակութիւն կարող է ունենալ շան վնկսոցը, երբ ամբողջ մարդկութիւնն է տառապում»: Որպէս զի օգնէիր նորան, շան վըն. կստոցը բու աչքում շատ չնչին զոհաբերութիւն էր թւում:

**ԱԼԲԵՐՏԸ.** Խս ասում էի, որ եթէ զօրապետներն իրաւունք ունին ամրող գնդեր ջնջել հայրենիքի փառքի համար, ապա նախապաշարում է գիտնականից երկու-երեք կեանք զոհաբերելու իրաւունքը իլլել՝ յանուն մի մեծ զիւտի, ինչպէս է կատաղութեան կամ թկացաւի շիջուկի գիւտը: Դժբաղդ զինուուրը, որ գնդակահար է եղած և զարչուրելի տանջանքներից հեծում է որև է մի փոսի մէջ, մինչեւ որ նորան չեն վերջացնիլ, նորա կօշիկները հանել-տանելու համար, այդ դժբաղդը մեռնում է, ի հարկէ, ոչ առաւել նուազ փառաւոր և վեհ զաղափարի համար, քան այն անզգայացրած հիւանդը, որի վերջին ճգնաժամերն անցնում են բժիշկների գիտողութեան առաջ նշյնչափ վեհ զաղափարի համար,—աղատել միլիօնաւոր համանման դժբաղդների կեանքը: Այսու այդպէս են իմ սկզբունքներս: Եւ, չնայելով, իմ բոլոր վիշտ ու կոկիծիս, ես այժմ էլ չեմ հրաժարուի նոցանից:

**ԱՌԻՒԶԱԸ.** Քո վիշտն ու կոկիծը: Այ, դու պերճախօս չուետո՞ր: Պէտք է ուրախանալ, ի հարկէ, որ քո փորձն իզուր չէ կորել, որ քո սրսկում—պատուաստումը ներգործում է. դիտիր... Ի՞նչ մի մեծ բան է, որ դու ելել ես մի մատաղահաս աղջկանից նորա կեանքի մի բանի երջանիկ տարիները և դորա փոխարէն մի բանի տանջանքի տարի ես շնորհել... Հապա, դոքա իփիարէն, ինչպիսի՞ գանձ ես մտցրել գիտութեան շտեմա-թանը: Խսկ կկամենաս ճշմարիտն իմանա՞ր: Քո բոլոր մեծագոյն մեծաշնչիւն բառերդ գիտութեան և մարդկութեան մասին, միայն մի նպատակ ունին, յագուրդ տալ քո փառասիրութեանդ: Եւ այդ աղջկին սպանում է յանուն քո փառասիրութեան, որպէս զի մի երեսուն տարուց յետոյ քեզարձան կանգնեցնէին, իսկ անունդ մարմարիոնէ տախտակի վերայ դրոշմէին... Աչա թէ ո՞րն է ճշմարտութիւնը:

**ԱԼԲԵՐՏԸ.** (Ուժեղ շեշտելով): Ո՞չ:

**ԱՌԻՒԶԱԸ.** Նոյն խսկ քո վիշտ ու կոկիծդ, եթէ միայն անկեղծ է դա, նշյնն է ապացուցանում: Չեր գիտութիւնը, ձեր նոր կուռքը, որին դուք երկրպագում էք և որի անունով ոտնակոխ էք անում ամենքին և ամեն ինչ, որչափ էլ զոհեր չբերէք նորան... Նա երես է շուռ տալիս ձեզնից: Դու կարող էիր նորան զոհաբերել միմիցն սեփական կեանքդ:

**ԱԼԲԵՐՏԸ.** Բայց միթէ ես երբեկիցէ փախել եմ վտանգից: Նրբեկիցէ դժբաղդին և հիւանդին բացասել եմ: Ես կեղտի մէջ կորած աղքատ մի կնոջից փարակուեցի բկացաւով: Նորան կեանք պարզելու համար իմ կեանքն էի զոհաբերում: Միթէ այն ժամանակ ես փառքի և պատիւների համար էի մտածում, ոռընցից պատրաստ էի յահիտեանս հրաժարուելու... Ես կեանքս վտանգի էի ենթարկում նոյա համար... այն պատճառով, որ առաւել բաղցր ու վեհ բան չկայ աշխարհում, բան այն՝ երբ մեռնում ենք յանուն զաղափարի, սկզբունքի: Երբ ես ժանտախտով փարակուած հիւանդի մունալից արտաշնչութիւն եմ շըն. չում, ես ինձ զգում եմ աւելի... մեծ մարդ, քան այն րոպէին, երբ ընկերակից ուսուցչապետները շնորհաւորում են ինձ իմ նոր, մեծ զիւտի համար: Այդպիսի զգայումներ ունենալով՝ իմ նոր հերոսութիւնս ինձ համար ծանր չէ: Եւ դու, Լուի՛զա, պէտք է, որ ինձ ըմբռնես, հասկանաս: Դու այն անձնաւորութիւններից ես, որոնք զիւտեն և ընդունակ են մեռնել յանուն զաղափարի: Երբ ես վտանգի մէջ էի, ես շատ լաւ իիշում եմ

քո հոգատարութիւնդ ինձ համար, դու այն ժամանակ կեանք՝  
էիր վտանգում մի մարդու համար, որին... դու չէիր սիրում:  
ԼՈՒԻԶԱ. Ես...

ԱԼԲԵՐՏ. Ո՛չ, դու երբէք ինձ չես սիրել, պէտք չկայ առ  
նուրջների յետեկից ընկնել... իսկ այսօր աւելի պարզ եմ տես-  
նում, — քո սիրութ երբէք չէ բարախել ինձ համար: Ներիր ինձ,  
եթէ սիրալում եմ: Ես աշխատում էի, հաւասարի լինելով, որ  
համակրութիւն եմ վայլում... և այդ հաւատը պէտք է, որ քեզ  
յուղէր:

ԼՈՒԻԶԱ. Քո հաւաստիութիւնը: Խեզէ՞ս պէտք է զա-  
նազանել նորան արհամարհանքից: Ես վիրաւորուած, անպա-  
տուած էի, ես զգածուած չէի, բայց յարգում էի քեզ... իսկ  
այժմ...

ԱԼԲԵՐՏ. Իսկ այժմ:

ԼՈՒԻԶԱ. Այժմ զարհուրում եմ քեզնից: Զեմ կարող մո-  
ռանալ այն աղջկանը:

ԱԼԲԵՐՏ. Դու շատ լաւ արեցիր, որ նորան առաջարկե-  
ցիր մեզ մօտ ապրել — ինձ համար էլ լաւէ այդ...

ԼՈՒԻԶԱ. Ինքս էլ չգիտեմ, ինչու առաջարկեցի... նա...  
դու... այդ կողքէ կողք, մի յարկի տակ կենցաղը, օ՛... (ծած-  
կում է դէմքը ձեռքերով):

ԱԼԲԵՐՏ. Խորեմ, չփոխես կարգադրութիւնդ: Դու զար-  
հուրում ես զոյի և սպանողի մերձաւորութիւնից... Ամեն բան  
կարգի կձգենք... Բայց դու սրտի ձայնին լսիր... Քոյրդ ինձ  
նախազգուշացրեց, որ դու մեր յարաբերութիւնների խզումը  
չես կամնում, բայց մի վախենար... Ես այնպէս կանեմ, որ  
իմ ներկայութիւնը շատ ծանր չի թուայ քեզ... Այս բոպէից  
դու բոլորին ազատ կարող ես համարել քեզ:

ԼՈՒԻԶԱ. Տես, յամենայն դեպս ես քո թշնամին չեմ...  
Ես այդ ազատութիւնն ընդունում եմ այն պատճառով, որով-  
չետե դա աւել ազնիւ ճանապարհ է: Ես այնպիսի տղամարդ  
չէի ընտրել ինձ համար իբրև ամուսին, որպիսին այսօր քեզ  
եմ տեսնում:

### ՏԵՍԱՐԱՆ VII.

ԼՈՒԻԶԱ, ԱԼԲԵՐՏ ԵՒ ՄՕՐԻՄ,

ՄՕՐԻՄ. (Բարեւելով): Բարեկ ձեզ: Այսպէս ուրեմն, ձեզ

Հետեւում, հալածում են... բացարձակ կերպով: Որքան անա-  
խորժ բան է: Զեր մտադրութիւնը չէ՞ք փոխել:

ԱԼԲԵՐՏ. Ամենեին. (Լուիզային): Խօսքը մի քանի թրդ-  
թերի մասին է:

ԼՈՒԻԶԱ. Գիտեմ:

ԱԼԲԵՐՏ. Ծատ մեծ տետրակ չէ, կարող էք գրանի մէջ  
թագցնել: (Դուրս է գնում):

ԼՈՒԻԶԱ. (Մօրիսին): Երէկ անբաւական մնացիք ինձնից:

ՄՕՐԻՄ. Այս:

ԼՈՒԻԶԱ. Իմ պատճառով մի՛ տանջուէք:

ՄՕՐԻՄ. Օ՛, այժմ տեսնում եմ թէ ձեր մէջ ինչ է կա-  
տարուում:

ԼՈՒԻԶԱ. Ուրեմն աւելի լաւ, որովհետեւ կարիք չի լի-  
նի խօսքերով արտայատել:

ՄՕՐԻՄ. Օ՛, ոչ ասացէ՛ք...

ԼՈՒԻԶԱ. Բայց ոչ այսօր:

ԱԼԲԵՐՏ. Այս դիտողութիւններիս և ցուցակների օրագի-  
քըն է: Տեսէք, պահպանեցէք ամենայն զգուշութեամբ:

(ՎԱՐԱԿՈՅՑ)

### Բ. ԳՈՐԾՈՂ ՈՒԹԻՒՆ

Մօրիս Կօրմիէի բնակարանում: Մի մեծ սենեակ, որ ներկայացնում է պարագելու սենեակ, զբադարան և փորձերի ըլուալութարան (laboratoire): Սեղանների վրայ զանազան գործիքներ: պատերից կախ զանազան մարդակազմական պատերներ:

### ՏԵՍԱՐԱՆ. I

#### ԼՈՒԻԶԱ. ԵՒ ԴԵՆԻՍ:

(Հուիզան համեստ, սեւ զգեստով, փոքրիկ քօղով, արագ գնում եւ նստում է քաղկաթոռի վրայ պարապելու սեղանի մօտ: Նրա յետնից մտնում է Դիենիսը):

ԼՈՒԻԶԱ. Եթէ պ. Կօրմիէն տանը չէ, ո՞ինչ, կսպասեմ: Լսում էք:

ԴԵՆԻՍ. Լաւ, լաւ, Բայց կարգ չէ, որ տիկիններն այս տեղ սպասէին... Այստեղ պարապելու սենեակ է, այստեղ ամեն մարդ իրաւունք չունի իւր բէֆն ուզածի պէս մտնել: Արդեօք բարի չէ՞ք լինի, որ հետեւէիք ինձ ընդունարանը:

ԼՈՒԻԶԱ. Զդիտեմ ո՞ւմ տեղ էք դնում ինձ: Ես ձեզ հաստատ խօսք եմ տալիս, որ պարոնդ չի բարկանայ վրադ, որ ես այստեղ եմ:

ԴԵՆԻՍ. Շատ պարզ է, նա զիտէ արդէն, որ եթէ ձեզ թողել եմ այստեղ մտնելու, կնշանակէ այլկերպ չնար չկար: Նախքան պյոտեղ մտնելս տասն և հինգ տարի ծառայել եմ Սալպետրիերում: Բոլոր փորձերի ժամանակ ներկայ եմ լինում: Ուրեմն, պարզ է, որ ջղային տիկինների չետ վարուելու եղանակը զիտեմ: Ուստի, եկէք, ծերուկիս ականջ դրէք, ինչպէս իմ պարոնին կլսէք: Ախր ես արդէն զիտէի, որ դուք պիտի զայիք:

ԴԵՆԻՍ. Խնչպէս չէ, պարոնը ձեր ամբողջ կեանքի պատ-

մութիւնն է արել ինձ:

ԼՈՒԻԶԱ. Եյ՝ թէ ինչ:

ԴԵՆԻՍ. Չեր անունն է Գօրտենզիա: Ճնուել էք Շիվրեօ- գում... մօտ երկու տարի է աշա, որ այսահար էք: Յաձախ չէք տանջւում, բայց հէնց որ բոնեց, էլ Տէրը փրկէ, թէ ո՞նց էք գոռում-գոչում, կուչ-կծիկ զալիս... Դուք թէկ գրագէտ էք, էք զայց չի կարելի ասել, որ շատ էլ զիտուններից էք... Է՛, իսկ բայց չի կարելի ասել, որ շատ էլ զիտուններից էք... Է՛, իսկ ընդունագութիւնը բոնած ժամանակ գուք նոյն իսկ լատիններէն էլ էք խօսում... Այս, տիրուչի: Ախ, քիչ էք մնացել մոռա- նայի: Չեր աջ աչքը ծուռ է:

ԼՈՒԻԶԱ. Ե՞ս... իմ աչքս—ձո՞ւռ:

ԴԵՆԻՍ. Այո՛, բնական դրութեամւ եղած ժակնակներդ: Իսկ հիւանդութեան ժամանակ, երկուսով էլ տեսնում էք:

ԼՈՒԻԶԱ. Սխալւում էք: Երկու աչքով էլ հիանալի տես- նում եմ:

ԴԵՆԻՍ. Տարօրինակ բան... իսկ նա ինձ ասաց, որ աջը...

ԼՈՒԻԶԱ. Իսկ մի՞թէ կոյրը կարող է տեսնել յանկարծ:

ԴԵՆԻՍ. Մենակ այդպիսի բաներ է լինում: Այ, օրինակ Լէօնին (Պատից վերցնում է նկարների ժողովածովից մի շըշանակ): Կոյր է, այդ ևեղա աղջիկն, ինչպէս տեսնում էք:

ԼՈՒԻԶԱ. Այսպիսի հրաշալի աչքեր՝ և կո՞յր:

ԴԵՆԻՍ. Այո՛ դա կոչում է ջղային կուրութիւն: Նորա ձեռքից բոնած են ման ածում: Է՛, բաւական է հէնց պարոնս քնէածութեան ենթարկէ նորան, որ իսկոյն տեսնէ: Բժիշկը կպատուիրի նորան տուն զնալ և նա կերթայ և նոյն իսկ ոչ որից ճանապարհն էլ չի հարցնել:

ԼՈՒԻԶԱ. Բայց ի՞նչպէս է բնէածութեան ենթարկում:

ԴԵՆԻՍ. Է՛, ի՞նչ էք ձեռք առել ինձ. կարծէք, ոչնչից տեղեկութիւն չունի: Ո՞վ զիդէ քանի անդամ հէնց ձեզ են քը- նացրել:

ԼՈՒԻԶԱ. Եւ ո՞չ մի անդամ:

ԴԵՆԻՍ. Է՛, կնշանակէ, այսօր կընեցնեն. առաջին պայ- մանն է, հէնց որ տեսնում ենք, որ կիւը մի նորանշան երե- ւոյթ է ներկայացնում, կնշանակէ հետաքրքրական «դէպք» է, իսկոյն և եթ քնեզնում ենք և տեսնում, թէ ինչեր կանէ բը- նած ժամանակ:

ԼՈՒԻԶԱ. Է՛, յետո՞յ:

**ԴԵՆԻՍ.** Հաստ զուարձալի բան է. կատարեալ կատակերպումիւն, Մէկին գնդասեղներով են ծակծկում. իսկ նա չի էլ զգում: Մի ուրիշը, որի թեր, կարծէք, ըոլորովին կաթուածահնար է եղած, քնած ժամանակ այդ թեն այնպէս է պտում, որ առողջ թեկիցն էլ լաւ: Իսկ այս սա, օրինակ (ցոյց է տալիս լուսանկարը), Ալերիան, երեսուն տարեկան է: Այս բանի օրս նրան ներշնչեցին, թէ ինքը տասը տարեկան փոքրիկ աղջիկ է. իսկ յետոյ մենք թագնուեցանք հարեան սենեակում և երեք ժամ շարունակ դիտում էինք: Եւ ոստոստում և ծիծառում էր և հէնց մի փոքր կծեծէինք դուռն այսպէս, նա իսկոյն սեղանի տակն էր մտնում՝ թագ կենում: Յետոյ սկսեց իւր մօրը դուրգուրալ և փաղաքշել... իսկ ինքի մայրը վաշ դուց է մոռել... մինչև անգամ մարդ փշարադում է:

**ԼՈՒԻԶԱ.** Անշուշտ:

**ԴԵՆԻՍ.** Պարոնի մօտ յաճախ պարապելու է գալիս պր. Ալբերտ Դօննան, հիւանդանոցից, որին Ալերիան ճանաչում է: Բայց և այնպես, երբ պ. Դօննան մօտեցաւ նորան, նա նորան այն երաժշտի տեղ դրեց, որ զալիս էր իւր մայրիկի մօտ: Խնդրեց, որ իւր բիթը սրբէ, ինչպէս փոքրիկ երեխային: Այս, մի ուրիշը՝ Քերթան. սարսափելի ատում է ինձ. քնէածութեան ենթարկելուց առաջ քիչ մնաց ապտակ պիտի զարկէր ինձ, իսկ քնած ժամանակն այնպէս սիրեց ինձ, որ նոյն իսկ իւր յօտ հրաւիրեց...

**ԼՈՒԻԶԱ.** Անուշ աղջիկ...

**ԴԵՆԻՍ.** Սպասեցէք: Ե՞ս, այժմ դուք ի՞նչ կպատմէք ինձ: **ԼՈՒԻԶԱ.** (ցոյց տալով լուսանկարները): Եւ այս բոլոր արարածները—հիւանդ, ախտաւորներ են, որոնց ըստ զանկութեան ստիպում են կամ լալ, կամ ծիծաղել...

**ԴԵՆԻՍ.** Այո՛, սորա ամենքն էլ—«դէպքեր» են, ինչպէս և դուք... Հա՞... իմացայ այժմ, թէ ինչպէս էք այստեղ եկել: Պարոնը ձեզ քնէածութեան է ենթարկել ձեր տանը և հրամայել է, որ դաք այստեղ... Դուք, իհարկէ, ոչինչ տեղեկութիւն չունիք, ոչինչ չեք լիշում: Չերն էք պնդում, ինձ չէք լսում, երբ ասում եմ դուրս գնացէք պարապելու սենեակից,— այս բոլորը ներշնչման արդինք է... Իս էլ ասում եմ: ինչպէ՞ս համեստ, ինչպէս բարեկիրթ, բայց միւսոյն ժամանակ ականչ չի դնում ինձ...

## ՏԵՍԱՐԱՆ Ա.

ԼՈՒԻԶԱ, ԴԵՆԻՍ ԵՒ ՄՕՐԻՍ.

**ՄՕՐԻՍ.** (Տեսնելով Լուիզային) Դուք... Այստեղ:

**ԴԵՆԻՍ.** (Կամացուկ Մօրիսին). Նա այնպէս ըարկացաւ, որ ես վախենում էի նորան դուրս անելուզ:

**ՄՕՐԻՍ.** Այդ էր պակաս:

**ԴԵՆԻՍ.** Սաստիկ զղային է:

**ՄՕՐԻՍ.** Լաւ, լաւ:

**ԴԵՆԻՍ.** Ասենք, այնքան էլ «թունդ»երից չէ: Հասարակ զղային յուղումներից է: (Դուրս է գնում):

## ՏԵՍԱՐԱՆ Բ.

ԼՈՒԻԶԱ ԵՒ ՄՕՐԻՍ.

**ՄՕՐԻՍ.** Դուք... դուք ի՞նձ մօտ Ա՛, որչափ երջանիկ եմ: (Կամենում է համբուրել նորա ձեռքը, որ կամացուկ ազատում է):

**ԼՈՒԻԶԱ.** Այսի, ոչ թողէք... Եթէ ես ձեզ մօտ եմ, միայն եսական շարժառիթներից դրդուած և հետս ձեզ համար երաջանկութիւն չեմ բերել: Եւ ի՞նչ երջանկութիւն կարող եմ պարզել ես: Զէ՞ որ հոգիս ցաւ ու վրդովմունքի ծով է միայն:

**ՄՕՐԻՍ.** Այո՛, վրդովմունքու շատ բան կայ... Այդ դատապարտութիւնը բաւական աղմուկ է հանել: Բայց ապացոյներն այստեղ են (ցոյց տալով գրասեղանը) և նորա չեն կարող ձեռք բերել: Սակայն հասարակական կարծիքն արդէն որոշ ուղղութիւն է ստացել: Որչափ դժգոյն էք այսօր:

**ԼՈՒԻԶԱ.** Ամրող դիշերն անքուն եմ անցրել Ամուսինս զիտենալով, որ իրեն չեմ սիրում, վեհանձնօրէն ազատութիւնս յետ է շնորհէլ ինձ: Բայց և չեմ կարող երեսի վերայ ձգել նորան այն բոպէին, երբ ամենքը երես են թերում նորանից: Նորա հետ անցրած օրերս աննախանձելի են եղել. ես երիտասարդ եմ, ես ծարաւ եմ բաղդաւորութեան... Մինչեւ այս բոպէս մտքովս մի բոպէ անգամ չե անցել թողնել, հեռանալ ամուսնուց: Ես յարգում էի նորան: Չնայելով, որ ինքս ինձ վիրաւորած էի համարում, սակայն և այնպէս յարգանք ու հիացում էի տածում դէպի նա: Զգտում էի ինքս էլ հասնել

այն պատուանդանին, որի վերայ կանգնած էի տեսնում նորան... Եւ յանկարծ, ամեն ինչ խորտակում է. Նա զլորուած է... ի՞նչ անեմ: Ես չընդունեցի, բայց և չմերժեցի ինձ շնորհած աղասութիւնը: Իսկ յետո՞յ ։ Ես հաւատում եմ ձեզ, հաւատում եմ ձեր իւելին, ձեր հոգուն և ոչինչ չեմ ծածկում... Ես զարհուրում եմ, երկիւղ եմ կրում մի տեղ երևալուց: Ալբերտը արիաբար կրում է բոլորը, — առաւօտեան հիւանդանոց գնաց, ցերեկը ձեմարանումն էր, ամենայն հաւանականութեամբ: Կոյսերի մայրապետի մօտ էի գնացել մի որբ աղջկայ համար, որին կամենում եմ մօտս առնել... Կարծում էի, թէ վանքում չին, մանկական յիշատակները նորից կարծարծուին մէջս: Բայց ամեն ինչ սառն ու մոպչ էր: Ինքս ինձ սարսափելի միայնակ եմ զգում:

ՄՕՐԻՍ. Ահա այդ պատճառով ե եկել էր ձեր... բարեկամի մօտ, Սիրում էր ինձ:

ԼՈՒԻԶԱ. Կարող էի ձեր առաջ բանալ հոգիս, եթէ... բայց այդ մասին չէ խօսքս: Ես ձգում, հեռանում եմ սեփական տնիցս — օջախիցս, որտեղ ամեն ինչ ինձ սարսափ է ներշնչում, բայց չնայելով այդ բոլորին, դարձեալ այնտեղ կկամենայի երջանկութիւն ու բարօրութիւն գտնելի Ես զիտնականի՝ և ոչ թէ բարեկամի մօտ եմ եկել: Դիմում եմ ձեր զիտութեանը, ձեր հոգեբանական դիտողութիւններին: Մարդկային հոգին բաց է ձեր առաջ, Բժիշկ եղէր և իմ հոգու համար, կատարեալ անկողմակալութեամբ: Շատ, շատ բան եմ պահանջում, բայց ոչ զիտութիւնից, այլ ձեր աղնուութիւնից:

ՄՕՐԻՍ. Բանն էլ այն է, որ զիտութիւնից շատ ու շատ բան էր պահանջում:

ԼՈՒԻԶԱ. Որչափ համեստ էր: Միթէ այնպիսի մի հասարակ գէպք, ինչպիսին իմս է, ձեզ զինաթափ է անում, ձեզ անզօր էր զգում նորա առաջ: Ամուսինս ինձ սարսափ է աղդում: Կարո՞ղ եմ արդեօք յաղթել այդ սարսափը և պարտաւո՞ր եմ արդեօք: Կդտնե՞մ արդեօք մէջս այնքան ոյժ, որ զո՞ք բերեմ ինձ: Եւ եթէ ոյժ չունենայ, բայց պարտաւորութիւնս ինձ թելադրէ, որ մինչեւ կեանքիս վերջը պարտաւոր եմ կապուած մնալ, ապա ո՞րտեղ է այն ելքը... Ցոյց տուէք, տուէք ինձ այդ միջոցները: Զօրացրէք, ամրացրէք իմ թոյլ ոյժերս:

ՄՕՐԻՍ. Տարօրինակ պահանջ է:

ԼՈՒԻԶԱ. Տարօրինակ: Ինչո՞վ:

ՄՕՐԻՍ. Դուք իմ զիտութիւնից շատ աւելի մեծ պահանջներ էր անում, քան կարող է տալ: Ես բարօրովին ընկճուում եմ այն պահանջների առաջ, որ դուք կամենում էր ստանալ՝ զիտութիւնից:

ԼՈՒԻԶԱ. Ի՞նչ է ձեր զիտութեան էութիւնը: Արգե՞ք մարդկային հօգին ուսումնասիրելը չէ:

ՄՕՐԻՍ. Հոգու... այս... կամ աւելի ճիշդ մարդկային այն կրքերն ու բերումները (affection), որոնց կոչում ենք հոգեկան տարօրինակ երեցյթներ:

ԼՈՒԻԶԱ. Չեղ՝ այդ ասպարիզում մեծ, նորամոյժ ոյժ են համարում:

ՄՕՐԻՍ. Կարծում եմ, որ մի փոքր բան էլ ես եմ արել զիւտերի այդ աշխարհում:

ԼՈՒԻԶԱ. Այսինքն՝ ի՞նչպիսի...

ՄՕՐԻՍ. Ինչպիսի: Ամեն տեսակի: Ոչինչ յայտնագործած չէ. ամեն ինչ ծածկուած ու գաղտնիք է հոգեբանութեան մէջ: Հաղարաւոր տարի է, որ բարի մարդկանց քթից բռնած ման են ածում գաղարկ բառերով: Իսկ հետեւանքը.— այն, որ մենք տեղեկութիւն ունենք Հրատի մթնոլորտի կազմութեան մասին, բայց ոչինչ զգիտենք այն մասին, թէ ի՞նչն է հարկադրում մեղ շնչել, մտածել, շարժուել: Միթէ խայտառակութիւն չէ՞ սա: Եւ ահա այդ խաւարից պէտք է ելնել: Մենք, որ վճռել ենք աշխատել զիտութիւն ստեղծելու, փորձերի, զիտողութիւնների միջոցով մարդկային բանականութիւնն ուսումնասիրելու, առանց որի զիտութիւն լինել չէ կարող, — այդպիսիներս շա՞տ, շատ բիչ ենք: Մենք հնարում ենք բաղմաթիւ մեքենաներ, գործիքներ, օրինակ այս զլանը (մօտենում է գործիքին եւ ցոյց է տալիս: Գործիքը նման է ծանրաշափիի, որի գլանը ծածկուած է սեւ թղթով, ներբեւ անցնում է կառւզուկէ խողովակի, որի ծայրին կայ նոյնպիսի տանձիկ): Գըլանը ստուարաթղթից է, ծածկուած է մուրով: Այստեղ մի փոքրիկ ծակ կայ, որի մէջ մի փոքրիկ սլաք, որ կպչում է զլանին. Նա միազած է խողովակի հետ, որը ես գնում եմ, օրինակ ձեր ձեռքում այնպէս, որ զարկերակի իւրաքանչիւր զարկը շարժում է և ոլաքը, որ ամեն անգամ նոր հոգը է թողնում զլանի վրայ. իսկ զլանը պտտում է ժամադրյալի մեքենայի շնորհիւ: Հետեւաբար զլանի վրայ ստացւում է ծուռ և

բեկ գծեր, որոնք շատ գեղեցիկ կերպով ապացուցանում են ինձ ձեր զարկերակի փոփոխութիւնները։ Տեսէր, ես ծափ կը տամ։ Եւ չնայելով, որ ես ձեղ նախազգուշացրի, բայց և այնպէս ծուռ ու մուռ գծերն աւելի յաճախակի գծուեցան, այսինքն, ապացոյց այն բանի, որ դուք յուզուեցաք, թէ չէք կարող հաշիւ տալ թէ ինչո՞ւ։ Ես կիարգամ այս գիրը։ Հետաքրքրական տեղերում մենք գլանի վրայ կստանանք թեք գծեր՝ աւելի մեծ անկիւնազգերով, իսկ անհետաքրքրական և ձանձրալի տեղերում հաղիւ նշմարուող անկիւնազգեր։ Գիտէ՞ք ինչ օգտակար գիւտեր կարելի է անել, եթէ այս եղանակով զետողութիւններ անենք մեր եւրաքանչիւր հոգեկան արտայայտութիւնների, իւրաքանչիւր զգացման վրայ։ Հաղարաւոր փորորաց՝ գործարաններում, զօրանոցներում։ Եւ իւրաքանչիւր փորձի համար արձանագրութիւն է պահւում, կամ իւրեւ մրոտած ստուարաթղթի վրայ գծմծուած սպիտակ հետքեր կամ իւրեւ կամ թուեր։ Այդ բոլորը ժողովում, գասաւորում ենք և կազմում զիտնական անհատնում դիւան։

#### ԼՈՒԻԶԱ. Յետո՞յ. հետեանքը։

ՄՕՐԻՍ. Ինձնից յետոյ ուրիշ գիտնականներ կը շարունակեն սյն գործը, պահելով այն տեղից, ուր կանդ էի առել և այդպէս շարունակ, անդադար, մինչև որ ժողոված նիւթերից ձշմարտութիւնը կցոլայ. այն ժամանակ միայն հոգեբառնութեան գիտութիւնը ստեղծուած կլինի և այն ժամանակ միայն կարելի է ասել՝ թէ հոգի ասուած բանը գոյութիւն ունի թէ ոչ, անմա՞չ է, ո՞րտեղից է սկիզբն առնում և ո՞ւր է գընում։ Այն ժամանակ դրական նախադրեալներ կունենանք հոգեկան մեքենակազմը սահմանելու համար։ Եւ այն մեքենա վարները, որոնք հոգեբան կիոչուին, անսխալ, անվրէպ ձեռքով կարող կլինեն նորոգել փչացած մեքենան։

#### ԼՈՒԻԶԱ. Բայց ե՞րբ կլինի այդ։

ՄՕՐԻՍ. Մի հինգ հարիւր տարուց յետոյ։ Շատ ժամանակ չէ այդ գիտութիւն ստեղծելու համար։ ԼՈՒԻԶԱ. Հինգ հարիւր տարուց յետոյ միայն ես հնարաւորութիւն կունենամ իմանալու, թէ հոգի ունի՞մ արգեօք և ի՞նչպէս պիտի բժշկել նորան։ Եւ այդ այն բոպէին, երբ հոգիս տանջւում է և ես հնարի չեմ զտնում իմ յուսահատ

վիճակիցս ելնելու... դուք ձեր բոլոր գիտութեամբ հանդերձ՝ շատ վատ մխիթարական միջոց էք հնարել... Աիր, հասարակ, և եղանական բահանան իմ վիշտու ու ցաւս ամոքելու միջոց ըլ գիտէ արդէն։ — իւր պարզ ու անպաճցի խօսքերով, բարոզով։

ՄՕՐԻՍ. Բայց ի՞նչ էիր ասում քիչ առաջ ձեր մենաստանի մասին, որից նոր էք գալիս։ Սառը... մոայլ...

ԼՈՒԻԶԱ. Բայց իմ խօսք մնաստանի բարէ պատերի մասին չէ։ Գիւղական ծերուկ բահանան, որ զօրեղ է իւր ուժեղ հաւատով, ինձ ոյժ, կորով ու աշխայժմ կներշնչէ։

ՄՕՐԻՍ. Խղճո՞ւկ գիւտութիւն... ինչպէս յարձակւում էք դուք նորա վրայ։ Ենթադրենք, թէ մի քիչ էլ մեղաւոր է նա... բայց դուք էլ... պահանջում էք նորանից այն, ինչ որ տալ չէ կարող։ Կա բուժում է մարմնական ցաւերը, բայց բարոյական տանջանքների առաջ անզօր չէ։ Թէ ոչ... ոչ բոլորովին... Այստեղ էլ նա օգնութեան է հասնում... Քանի՞-քանի կանայք, որոնք տանջւում էին հոգեպէս, թողել հեռացել են այս սենակը համարեա առողջացած։

ԼՈՒԻԶԱ. Ուրեմն ինչո՞ւ անպատճառ նորա և ո՞չ ես։

ՄՕՐԻՍ. Որովհետև դուք մարմնով առողջ էք. իսկ իմ հիւանդների հոգեկան խանգարմանը հետեւում էր և մարմնական հիւանդութիւն։

ԼՈՒԻԶԱ. Օրինակ անդամալոյծ ձեռք կամ զղային կուրութիւն։

ՄՕՐԻՍ. Օ՛ դուք բաւական տեղեկութիւն ունիք։

ԼՈՒԻԶԱ. Ընորհիւ ձեր ծառայի պատմութիւններին, որը ընդունել էր ինձ... գիտէք ո՞ւմ փոփարէն։ Այն կնոջ տեղը դնելով, որ այսահար է և որին այսօր սպասում էք։ Կնշանակէ, եթէ ե՞ս լինէի այդ գժրազդ կնոջ տեղ, դուք ինձ առողջացնելու խնդիրը ամրող հինգ դար չէիք յետաձգիլ։

ՄՕՐԻՍ. Եւ յիրաւի, կարծում եմ, որ կարող կլինեմ բժշկել նորան...։

ԼՈՒԻԶԱ. Ի՞նչպէս։

ՄՕՐԻՍ. Ես նորան կհեպնողացնեմ և կներշնչեմ, թէ դկը թողել, հեռացել է նորանից։ Միանգամից, իհարկէ, չի յաջողի, բայց 15-րդ, 20-րդ փորձին կլայնողի...։

ԼՈՒԻԶԱ. Այնպէս որ, եթէ ես էլ հիւանդ լինէի, դուք ինձ կը բնադնէիք և...։

ՄՕՐԻՍ. (Ժպտալով). Եւ յիրաւի, ինչո՞ւ չփորձել...։

ՀՈՒԽՁԱ. Կամենում էք ինձ քնացնե՞լ:

ՄՕՐԻՍ. Չարժէ նեղութիւն կրել, արդէն արուած է:

ՀՈՒԽՁԱ. Քնած եմ; Ե՞ս:

ՄՕՐԻՍ. Ոչ ոչ, հանաք եմ անում: Դուք զառանցում էք:

ՀՈՒԽՁԱ. Աւելի շուտ դուք էք զառանցում:

ՄՕՐԻՍ. Ներեցէք, ես միշտ պատրաստ ունիմ փոքրիկ տեսութիւններ զանազան անակնունելի գէպերի բազատրութեան համար: Չեր այցելութիւնը ես բայատրում եմ, իր ներշնչման հետևանք:

ՀՈՒԽՁԱ. (Հեղնօրէն). Մի քիչ առաջ ծառան էլ նոյն էք նա խագուշակում, երբ ես այստեղ եկայ:

ՄՕՐԻՍ. Հանգիստ թողէք այդ ծերուկ չաչանակին: Այո՛, դուք այստեղ զտնւում էք այս րոպէիս ներշնչման շնորհիւ: Երէկ երբ ձեզ մօտ էի, դուք պատկերացաք իմ առաջ, ինձ հետ միասին, այս սենեակում, այնպէս, ինչպէս այժմ: Հայեացրիս մէջ անդրադարձաւ այդ իմ ներբին զօրեղ, կրօտ զդացումս և ես ներշնչեցի: Զի կարող աւելի զօրեղ ներշնչում լինել, բան այն, երբ երկու բուռն ցանկութիւն զուգադիպութեամբ նոյնն են ցանկանում: Եւ այժմ... ինձ համար շատ պարզ է,—դուք սիրում էք ինձ:

ՀՈՒԽՁԱ. Աչա զիտնականի եղբակացութիւն, որի համար, կարծես, միայն ապացոյցներ են պակաս:

ՄՕՐԻՍ. Ինձ չափազանց ինքնավտտա՞հ էք համարում: Օ՛, ոչ, ես զիտեմ, որ երկու օր առաջ դուք գէպի ինձ ամենասովորական համակրութիւն էիր տածում, բայց այսօր ինքն իրեն ինձ մօտ է զալիս մի օգնական, ու համակրութիւնը սիրոյ կվերածէ.

ՀՈՒԽՁԱ. Ի՞նչ օգնական է դա:

ՄՕՐԻՍ. Աիշաը: Ինչպէս հողեկան, նոյնպէս և կենդանական կեանքում, հիւանդութեան ենթակայ է արդէն թուլացած մարմնակազմը: Եւ սէրն այդպիսի ախտաբանական գէպի ամենաբնորոշ տիպն է: Տեսէք, ժողովուրդը շատ անգամ սէրն ու ինելազարութիւնը նոյնազնում է: Եւ իրաւի, մարդուն յան կարծակի բերող վիշտը, նայելով հանգամանքներին, կամ սիրոյ և կամ ինելազարութեան է տանում:

ՀՈՒԽՁԱ. Այնպէս որ բաղդաւոր մարդիկ անընդունակ են սիրելու:

ՄՕՐԻՍ. Մի՛թէ այդպիսի բան ասացի: Բայց նոքա զրս.

պում ին իրենց, թէկ կիրրը նոցա տակն ու վրայ է անում:

ՀՈՒԽՁԱ. (Հեղնօրէն). Որի պատճառով և շնորհաւորում եմ ձեզ, այն ինչ ինձ մնում է, որպէս խելազարի, օգտուել իմ բուռն սիրով:

ՄՕՐԻՍ. Մի բարկանաբ: Ես միայն իմ տեսութիւնն էի պարզում: Դուք տանջւում էք և ցաւից ծնուում է սէր, ճիշդ այնպէս, ինչպէս խոնա, բորբոսնած ձահճիդ ծնուում է հրաշալի ծաղիկ: Սէրը բոնկել է ձեր մեջ, դուք այլ ևս ձեր տէրը չէք և առանց կեղծ ամօթ զգալու վազում էք այստեղ, ինքներդ էլ անկարող լինելով այդ մասին հաշիւ տալ:

ՀՈՒԽՁԱ. (Հեղնօրէն) Այո՛, այո՛, իհարկէ: Գիտէ՞ք, ինչ կասկած ծագեց սրտումս: Երկու օր առաջ, երբ դուք աշխատում էիր հրաշպուրել ինձ ձեր պերմախոսութեամբ, ձեզ բաջ յայտնի էր մեզ սպառնազող վտանգը... Ո՞չ: Մի հերքէր... Ամուսինս նոյն օրն եղել էր ձեզ մօտ և խնդրել, որ գաք թըդ-թերը վերցնէք: Ախ, ինչպէս առաջ չէի մտածել: Աչա՛, բանի՛ տարի է ամբ, որ դուք հետեւում էք ինձ: Եւ ձեր թղթերի մէջ, անշուշտ, մի տեղ, մի կտոր թղթի վրայ իմ մասին նկատողութիւն կունենաք արած, որի մէջ նշանակած կլինէք իմ նախապատրաստութեան զանալան աստիճանների մասին... և միայն սպասում էիր յարմար ժամ ու ժամանակի, երբ թախիծըն ու անրուն գիշերները կհասցնեն ինձ ձեզ համար ցանկալի հետեւանքին: Ալրերտից ստացած տեղեկութեան հիման վերը նախազգուշացած, այն օրուայ նախօրէքին, երբ ձեր հարայ նախազգուշացած, այն օրուայ նախօրէքին, երբ ձեր հարայ նախազգուշացած, այն օրուայ նախօրէքին, ամենեին աչքի առաջ չունենալով իմ ջղային դրութիւնս... իմ ցաւս ու վիշտս նոյն իսկ պէտք է նպաստէին ձեր նպատակն իրազործելու համար: Հրաշլի՛ է: Սէրը, ձեր հաշուով, խելազարի սովորական զառանցանք է, ուրեմն պէտք է օգտուել այդ խելազարութեան բոպէից: Գիտէ՞ք ինչ զուցէ ամուսնուս ոճիրն աւելի զարհուրելի է բան ձեր արարքը, սակայն...

#### ՏԵՍԱՐԱՆ IV.

ՀՈՒԽՁԱ, ՄՕՐԻՍ եւ ԴԵՆԻՍ.

ԴԵՆԻՍ. Պ, Դուննան է եկել: Կարո՞ղ է ներս գալ:

## ՏԵՍԱՐԱՆ V.

ՄՕՐԻՍ ԵՒ ԱԼԲԵՐՏ.

ԱԼԲԵՐՏ. Բարեւ: Այսօր ինձ վերայ յոյս չդնէք՝ երեկոյ յեան ճեմարանում ժողով ունենք: Ես անպատճառ պիտի ներկայ լինեմ, որպէս զի չկարծեն, թէ թագնուում եմ: Տեսնում էք ինչպէս են գզում ինձ մամուլի մէջ:

ՄՕՐԻՍ. Այս շատ ցաւալի է:

ԱԼԲԵՐՏ. Որբան մաղձ ու դառնութիւն... Եւ ամենքն էլ իմ ընկերակիցներս: Մարդիկ, որոնց գլխում մի առողջ միտք, դատողութիւն օր ցերեկով՝ ճրագով չէր գտնիլ այս՝ այնպիսի պարոններ, որոնք դարձանի տակի ջուր են, զիտեն հետքը կորցնել... այդպիսիներն՝ այժմ դնչները շատ բարձր են ցցել:

ՄՕՐԻՍ. Բայց մենք էլ իսկական գիտնականներս, քիչ չենք, որ ձեզ պաշտպանում ենք:

ԱԼԲԵՐՏ. Օ՛, ես այժմ կամաց-կամաց սովորում եմ վարժուել գրութեանս հետ: Միայն սաստիկ խղճում եմ կնոջս—այս ամենը նորան չափազանց վրդովենում է և զգում եմ, որ իմ արարքներովս սարսափ եմ ազգում նորան: Նա, իհարկէ, չի կարող հասկանալ իմ ձգութիւների ամբողջ ծանրութիւն ու դըմուարութիւնը: Եւ եթէ երբ և իցէ յաղթանակեմ նոյն իսկ և կատարեալ փառքի հասնեմ, ապա այն ժամանակն էլ նա ինձ չի կարող ներել այն միջոցների գործադրութիւնը, որով ես հասայ դորան:

ՄՕՐԻՍ. Կին ըմբռնել չէ կարող և նոյն իսկ տղամարդոց մեծամասնութիւնն էլ այդպէս է: Տեսէք. երդուեալ դատաւորներն արգարացնում են մեկին, որ յանցանք է կատարել կրքի շարժառիթից ստիգուած, այն ինչ ձեր...

ԱԼԲԵՐՏ. Կամենում էք ասել ոճիրը... Դուք էլ էք ոճիր անուանում այդ:

ՄՕՐԻՍ. Ոչ: Այդ չէի կամենում ասել: Ի՞նչ ոճիր կարող է լինել այնտեղ, երբ մարդկային այդ ծուեններից օգուտ էք կորզում՝ յանուն զիտութեան: Կատարեալ իրաւունք ունիք:

ԱԼԲԵՐՏ. Հապա: Դուք զոնէ քար ձգողներից պիտի չը լինէք...

ՄՕՐԻՍ. Ի՞նչպէս:

ԱԼԲԵՐՏ. Մի յետ նայեցէք, մտարերեցէք անցեալը ին-

ՄՕՐԻՍ. Ոչ ոչ, ես ինքս կգամ... Այսաշար հիւանդը դեռ չէ եկել:

ԴԵՆԻՍ. (Սայելով Լուիզային). Ինչպէս չէ...

ԷՈՒԻԶԱ. Ոչ, բարեկամ, քո ասածը տանձն է:

ՄՕՐԻՍ. Խնդրեցէք բժշկին մի բոպէ սպասէ:

ԴԵՆԻՍ. Հատ բարի:

ՄՕՐԻՍ. Չեր ամուսինն էլ է գալիս ինձ մօտ այդ հիւան-

դի վրայ դիտողութիւն անելու:

ԷՈՒԻԶԱ. Դուք կարծում էք թէ ես վախենում եմ ա-

մուսնուս հանդիպելուց: Ես աղատ եմ այժմ: Բայց ոչ, ես կիան-

դարեմ նորան աղատ խօսելու:

ՄՕՐԻՍ. Իմ և նորա մէջ գաղտնի ոչինչ չկայ:

ԷՈՒԻԶԱ. Նա ինչոր գաղտնիք ունի, մի բան թագցնում

է... Զափազանց հանդիստ է... Երեկի մի բան է մտադիր

անելու...

ՄՕՐԻՍ. Անհանդիստ մի' լինիք: Նորան լաւ եմ ձանա-  
չում: Այսպիսիներից չէ, որոնք իլուր արիւն պղտորեն մի բա-  
նի անմիտների բարձրացրած զոռում զորումից:

ԷՈՒԻԶԱ. Բայց նա չի կարող և իրեն ներել կատարած  
սիալը...

ՄՕՐԻՍ. Ի՞նչ սխալ:

ԷՈՒԻԶԱ. Դա արդէն նորա գաղտնիքն է: Այստեղ կըն-  
դունէք նորան:

ՄՕՐԻՍ. Այս, ինչպէս սովորաբար:

ԷՈՒԻԶԱ. Ես կկամնայի լսել թէ ի՞նչ է ասում նա:  
Ցոյց տուէք թէ որտեղից էք զիտում տասը տարեկան երեխայց  
բարձրած տիկիններին:

ՄՕՐԻՍ. (Յոյց տալով դուռը). Իմ սենեակից: Վարա-  
գոյրի յետեկից ծակ է թողնուած զիտելու համար:

ԷՈՒԻԶԱ. Ես պիտի թագնուեմ...

ՄՕՐԻՍ. Միթէ հանաբ չէք անում: Լուրջ:

ԷՈՒԻԶԱ. Նոյն իսկ չափազանց լուրջ: Տեսնում եմ, որ  
մարդ ձանաչելը դժուար է: Պէտք է ծածուկ լսել նորան: (Դլ-  
նում է միւս սենեակը):

ՄՕՐԻՍ. (Յետեկից). Երբ կերթայ, յոյս ունիմ, որ բաւա-  
կան... կակած կինիք: (Դիմում է դէպի մուտքի դուռը եւ  
ներս է հրաւիրում Ալբերտին):

չո՞վ էինք զբաղւում այստեղ՝ այս սենեակում։ Այն հիւանդոտ ջղերի դրցակից, որ մենք ընթակայ (subiect) ենք անուանում, գուք այնպիսի մեծ բանակութեամբ զանազան հոգեկան կրքեր ու բերումներ էք դուքս կորզում, որ առաջին պատահած վէպի մէջ դտնուող բոլոր անձնաւորութիւնների համար լիուլի կը բաւականանար. նորա ուղեղի մէջ դուք ներշնչում, դում էք ամենազան պատկերացումներ, մի խօսրով, դուք ոչնչացնում էք ձեր բոլոր ընթակայնների հիւանդների ինքնուրոյնութիւնը, փոխարիսնելով՝ այն էլրոնազրոսիկ միջոցներով նորերով. ինքնուրոյնութիւնը, սեփական եսի ոչնչացնումն էլ նոյնպիսի ոճիր է։ Տարբերութիւնը միայն բառերի մէջ է։ Ի՞նչ էք նայում ինձ այդպէս...

**ՄՕՐԻՍ.** Ես լսում եմ դատավճիռս, ինչպէս յանցաւորը դատախաղին է լսում։

**ԱԼԲԵՐՏ.** Սիելում էք։ Ես ապացուցանում եմ, որ դուք սպանութիւն էք գործում, բայց ես չասազի, որ իրաւունք չունեք այդ բանն անելու։ Իւրաքանչիւրը, ով մի նոր բան է մացնում. . . իւրաքանչիւր «որոնող», լինի դա գրող, փիլիսոփայ, գիտնական, միենցին է, սպանութիւն է կատարում. Նորա որոնք բանդում, կործանում են նախկին հաւատալիքներն ու աւանդական կարգերը, մասամբ և ջարդում են ու փշրում այն անօթները՝ որոնց մէջ այնքան ինամբով պահպանում էին դոքա։ Մարդկութիւնը, մանաւանդ կաղմուած է այնպիսի անհատներից, որոնք հոգում են նիւթական կենսական բարօրութեան համար։ Իսկ ընդհանրապէս, բոլոր մարդկութիւնը շարժում, ղեկավարում է միայն այնպիսի գաղափարներով, որոնք նորա համար այնքան թանգարին և սուրբ են, որ եթէ դուք դոցանից մէկը ոչնչացնում էք, հազարաւոր դժբաղդ արածներ զոհ են դառնում ձեր արած մի բայլին։ Խորհող փիլիսոփան թափառում է այնպիսի ուղիներով, որը դիակներով է ծածկուած և յածախ իւր դիակն էլ է այնտեղ թողնում։ Իւրաքանչիւր մարդ, որ մի նոր, յիրաւի նոր, տող բան է գրում, կարող է ապագայում նոր զօներ, նոր սպա. նութիւններ սպասել՝ բայց դորանից չի հետեւում, թէ մենք պարտաւոր ենք լուել և ծածկել այն մեծ ձշմարտութիւնները, որ գտնում, յայտնագործում ենք։

**ՄՕՐԻՍ.** Զեր խօսքերը մարդու սարսափեցնում են։

**ԱԼԲԵՐՏ.** Ամենդ էլ մի սանրի կտաւ էք, — էք կամե-

նում նցյն իսկ մահուան անունը լսել։ Գիտէ՛ք, բարեկամ, աշխարհում երկու հոգի կան, որոնք շարունակ, իրենց ամբողջ կեանքի մէջ գործ իունին մահուան հետ, — բժիշկը և բահանան։ Եւ դա այնպիսի գուար առաջանաւ է, որ երկուսն էլ հընարաւորութիւնների համար գործին հասարակ աչքով, սովորական հայեացըով չվերաբերելու։ Քահանան, աչքի առաջ ունենալով մեռածների յարութիւնը՝ յաւիտենական կեանք է խոստանում։ Նորա համար մահը — ամենապարզ փոխանցումն է մի վիճակից միւսը, փոխարկութիւն դէպի յաւագոյն վիճակ, նոր կեանք։ Բժիշկը զիտութիւնից իւր համար կրօն է ստեղծում և զլուխ խոնարհեցնում նրա առաջ, ինչպէս կուռքի առաջ. հաւատում է նորան, ինչպէս ամենամոլեռանդ հաւատացող և մեռնում — նահատակում է նորա համար, ինչպէս կատարեալ մարտիրոս, եթէ այդ է պա. հանցում նորանից զիտութիւնը։

**ՄՕՐԻՍ.** Դուք շատ բանի մասին էք խորհու, որոճացել երեկուանից գէսը։

**ԱԼԲԵՐՏ.** Այս, Ճշմարիտ է։ Մեր կեանքում կան վայրակնաներ, երբ պէտք է կանդ առնենք և շունչ բաշենք, խորհենք ու կշռենք անցած ձանապարհը և այն նպատակը, որին ձգտում ենք։

**ՄՕՐԻՍ.** Ես համաձայն չեմ։ Երբ ձեր առաջ պատկերացած-կանդնած է մեծ զաղափարը, նպատակը և բուռն եռանդը ձեղ ձգում-բաշում է գէպի նա, այն ժամանակ ամեն ձանապարհ ու միջոց լաւ է։ Պէտք է առաջ զիմել. զիմել առանց զանդ առնելու և չորս կողմը աչք ածելու։ Խզուր ժամավաճառ չպէտք է լինել և ոչ էլ իւր խեղճը վերսուուգել։ Պա-թուամորթութիւն է։ Միջոցների աւելորդ խտրութիւնը միայն գործն է յետաձգում։

**ԱԼԲԵՐՏ.** Այս այդպէս էլ արել եմ։ Միջոցների խըտ-թուամբիւն գնելու մէջ՝ ինձ չեն կարող դատապարտել... Այդ թուամբիւնը ես չեմ ունեցել... Բայց և այնպէս, կան բոպէներ, երբ պէտք է զլուխներս բարձրացնենք ու մի չորս կողմերս դիակներ։ Ապա թէ ոչ, զիմե՛ր, շատ բիչ զանազանութիւնների թինի թինի ուակ բաշած եղի և մեր աշխատանքի մէջ, — մաքի, խօհականութեան մշակներիս աշխատանքի մէջ։ Ես չեմ կարող ենթագրել, որ իսկապէս զիտնական մարդը — խորհողը, և ոչ ամենապէտ՝ դդմազլուխ — խեղապատակը, — ասում եմ, որ այդ խորհող զիտնականը իւր աչքերը բարձրացնէր, չ'յառէր

Դէպի վեր, բարձունք և Աստուած չորսներ:

ՄՕՐԻՍ. Բայց դուք՝ ինքներդ էք շատ անդամ կրկնել ինձ, թէ շատ յաճախ էք տեսել ձեր հիւանդների հոգին ձեր վիրաբուժական դանակի ծայրին, հետևարար և չէք կարող հաւատալ այդպիսի հոգեպաշտական տեսութիւնների: Սա ձեր սեփական խօսքերն են:

ԱԼԲԵՐՏ. Դորա զիտնականի խօսքեր չեն:

ՄՈՐԻՍ. Եւ ի՞նչ կարիք ունեն զիտնականներն զբաղուեածու այնպիսի մի ինդրի, առեղծուածի լուծումով, որի համար նախադրեալներ, փաստեր չունեն:

ԱԼԲԵՐՏ. Նախադրեալներ, փաստեր վկան: Հապա յաւիտենականութեան այն զգացումը, այն ցանկութիւնը որով ամբողջ բնութիւնը մինչ այն աստիճան առցուած է, որ ամենահասարակ, սովորական առարկան անդամ,—օրինակ սեղանը,—չէի կարող երևակայել, առանց այն բանի, որ իմ երևակայութեան մէջ չպատկերանային բոլոր սեղանները՝ այժմեանները, անցած ժամանակինը և ապագայինը: Եւ յանկարծ, իմ բանականութիւնս, որ ամեն մի առարկայի յաւիտենականութեան գաղափարն է մատակարարում, յանկարծ՝ ինքը զուրկ է դորանից... Դատարկութիւն... ոչինչ... կարելի՞ է մտածել այդ մասին առանց սարսուռ զգալու: Կարելի՞ է: Ոչ մի ասէք: Այդպէս է թւում միայն հեռուից: Ինձ ծանօթ է փառք ասածդ: Յաղթանակի այնպիսի րոպէներ եմ ունեցել, որ եթէ դոցա մասին երիտասարդութեանս ժամանակ գուշակէին, ես կրազականչէի— «Միայն թէ ապրէի մինչ այդ րոպէն, իսկ այնուհետեւ թէւ մահս հասնէր»: Եւ ես ապրել եմ մինչ այդ րոպէները, սակայն մեռնել... չեմ կամենում: Մօտ ժամանակներս էր, որ գէպքերի զուգորդութեան շնորհիւ, ատրանակի փողը ըներակիս ուղղեցի, —կասեմ, յետոյ, թէ ինչպէս, —այն հաստատ որոշումով, որ անձնասպանութիւն գործեմ... Եւ, անկեղծ եմ ասում, այդ ժամանակ զգացի, թէ ինչ սարսափ կարող է զգայ մարդ, երբ չէ հաւատում յաւիտենականութեան: Երկուս էլ տարուած, տոգորուած մարդ ենք նոր զիտութեան զալափարներով, թէ իւրաքանչիւր բնական երկոյթ պէտք է անպատճառ իւր համապատասխան առարկան ունենայ, օրինակ, աչքի համար— լոյսը, թոքերի համար— շնչառութեան պիտանի մթնոլորդ և այլն և այլն: Այժմ մի փորր տրամարանօրէն մտածենք: Յաւիտինական կեանքի այդ բուռն տենչանքին՝ պէտք է համապատաս-

խանէ և յաւիտենական կեանքը: Այն ինչ դուք չէք կամենում տալ ինձ այդ յաւիտենականութիւնը, Բայց իմ բանականութիւնս, զիտնականի բանականութիւնս, զրդովում է: Ինչո՞ւ չէք կարծում, թէ նորա զյութիւնը բացասելով դուք հեշտացնում եք տիեզերական ինդրի լուծումը, ես այդպէս չեմ կարծում:

Անցեալ զարնան իմ կալուածումս էի, այնտեղ ունեմ իմ սիրած անկիւնս՝ լճակի ափը, որ լիբն է սպիտակ ջրային շուշաններով: Այս տարի, ձիւների ուշ հալուելու պատճառով, լընակի ջուրը շատշատ էր բարձրացել և շուշաններն իրենց կարճ ժողուններով չէին կարող հասնել ջրի մակերեսոյթին: Հարիւրաւոր սպիտակ կոկոններ էին երեսում ջրի բարակ շերտի տակ. Քյուը գուրս էր մզում իւր գլխիկները, լարի պէս ձգուած ցողուններն օրէցօր բարակում ու բարակում էին: Մի վերջին ձիգ ես, և գուղե, արժատախիլ կիննէին: Կեանքի ձգտման այդ մաքառման մէջ օրհասական, հերոսական մի բան կար: Եւրաքանչիւր օր գիտում էի այդ երկոյթը և, տեսնելով, որ ջուրը շատ գաղաղութեամբ է պակսում, ես մաքով գիմում էի գէպի նողա ձգող—բաշող արել: Յի՞թէ նա չի յաղթանակի, մի՞թէ սիրուն ծաղիկները չեն գիմանայ. այդ անհաւասար կոուին: Բայդ վերջապէս, արել յաղթանակեց և հիանալի, սպիտակ, բացուած շուշանների անթիւ—անհամար ծաղիկների ծովը զարդարեց լճակի մակերեսոյթը: Տեսնում էր, իմ սիրելի պարսն, այդ ծաղիկներն ինձ որոշ մտքերի առաջնորդեցին: Ես և գուք, մնը ամենքս, զիտնականներս, զիւտեր անողներս, մնը այդ ծաղիկների կոկոնների պէս խորասուզուած ենք անզիտութեան, անյայտութեան և խաւարի լճակի մէջ և աշխատում ենք, ջանք ենք թափում, վիզներս՝ յժմերից աւելի ձգելով, հասնել ջերմ, փափագելի լոյսին: Ո՞ր արեկց կծագէ մեզ համար այդ լոյսը՝ ես չգիտեմ: Բայց այդ արել զյութիւն պիտի ունենայ:

ՄՕՐԻՍ. Ի հարկէ, ի՞նչ կասկած: Այն արել, որին ձըգտում ենք մնը, —կենսարանական ձշմարտութիւնն է. իմս— հոգեբանական ձշմարտութիւնն է, ուրիշները— ընական զիտութիւնների, մատեմատիկայի և այլ ձշմարտութիւնը: Որպան զիտութիւն՝ նոյնչափ և արեւ:

ԱԼԲԵՐՏ. Բայց եթէ լինի մի ձշմարտութիւն, որի մէջ միանում—ձուլւում են միւսները: Զէ՞ որ իմ բոլոր շուշանները

ձգտում էին միենոյն արկին:

**ՄՕՐԻՄ.** Հէնց այդտեղ է նոցա ու մարդկանց զանազառ նութիւնը: Խոստովանեցէք, որ երբ դուք նստած էիք լճակի ափին, ձեր մտքովն անդամ չէր անցել այն համեմատութիւնը, ինչ որ արեք այժմ, այն րոպէին, որ ձեզ համար աւելի ծանր էր, քան ենթադրում էք:

**ԱԼԲԵՐՏ.** Գուցէ:

**ՄՕՐԻՄ.** Աչա չորս տարի է, որ մենք աշխատում ենք միասին և երբէք գուք, ոչ մի անդամ, չէր շօշափել կրօնական հարց. այն ինչ այսօր անդադար նորա շուրջն էք էք պատում անդադար յարուցանում: Գիտէ՞ք ինչ է ապացուցանում այդ: Որ չնայելով ձեր ուժեղ բնաւորութեան, այնուամենայնիւ գտնուում էք ներկայ ծանր հանդամանքների զօրեղ. աղդեցութեան տակ: Դուք կրօնական պայքարի մէջ էք գտնուում, որ ամենքիս քաջ յայտնի է: Եւ ծանր վշտի տակ ձնշուած անհատը, և' մահուան տապնագի մէջ գտնուող հիւանդը, երկուսն էլ նոյն հոգեկան վիճակի մէջ են գտնուում: Ամենազօրեղ մտքերն անդամ սնահաւատութեամբ կարող են պաշարուել: Այդ վիճակը մենք մեռնողների սնահաւատութիւն ենք անուանել:

**ԱԼԲԵՐՏ.** Լսեցէք, Մօրիս, դուք վարպետ ախտարանական նշաններ որոշող էք...

**ՄՕՐԻՄ.** Ի՞նչու էք ծաղրում...

**ԱԼԲԵՐՏ.** Ոչ, լուրջ եմ ասում: Շատ ուղիղ է.— մեռնողի սնահաւատութիւն:

**ՄՕՐԻՄ.** Եւ կամ դորա պէս մի բան: Շաա պէտք է տանջուած լինիք, մինչեւ որ այդ կէտին էք հասել:

**ԱԼԲԵՐՏ.** Լսեցէք: Զեր կոաչումն արժէ վարձատրել իմ կողմից մի փոքրիկ խոստովանութեամբ: Խնդիրն ամբոխի գոռում-գոչումի մէջ չէ. ինդիրն այլ է բոլրովին: Ես բժշկում էի մի աղջիկ, որ թոքախտ ունէր. նորան սրմէցի, պատուառտեղի մահալու թոյն... ևս երէկ տեսայ նորան... բոլորովին առաջացած թոքախտից. Մինչ այն աստիճան շշմած էի, որ պատրաստ էի... (Ատրճանակով սպանուելու փորձի շարժում է անում):

**ՄՕՐԻՄ.** (Վրդովլուած). Անկարելի է:

**ԱԼԲԵՐՏ.** Գործերս կարգի բերի և վճռեցի:

**ՄՕՐԻՄ.** Իչարկէ, շատ ցաւալի է, սակայն աղջիկը զոհ կերպայ ձեր փորձին. բայց որ նորա պատճառով ձեզ պէս մէկը...

**ԱԼԲԵՐՏ.** Եւ զիտէ՞ք ինչը փրկեց ինձ:

**ՄՕՐԻՄ.** Խընապահանութեան բնազդը:

**ԱԼԲԵՐՏ.** Ամենկին: Պատերազմի մէջ մեծացած մի զօրապետի հարցրին, թէ երբեկից զգացե՞լ է երկիւղի զգացում, պատասխանեց—ոչ. սակայն, աւելացրեց, միշտ բռնուած էի, պատերազմի վերջն իմանալու բուռն ցանկութեամբ և զգացումով: Այդպիսի հետաքրքրութեամբ այժմ ինքս եմ բռնուած: Ես, պէտք է ենթադրել պատուաստների շրջանի մի մեծ զիւտի նախօրէքին եմ ապրում... և մինչեւ այդ վայրկեանի հսկութեամբ՝ մեռնել, ինձ համար անկարելութիւն թուաց, (Մօրիսն անթարթ նայում է նորան): Ի՞նչ պատահեց ձեզ:

**ՄՕՐԻՄ.** Տարօրինակ բա՞ն... Զեր աչքերն այս բոպէիս մի ուրիշ արտայայտութիւն ունին... յիշեցնում են մէկին... Սպասեցէք... հա, Կլեմենտինային: Յիշո՞ւմ էք:

**ԱԼԲԵՐՏ.** Նա, որ երեւակայում էք, թէ իւր զաւակին սպանե՞լ է:

**ՄՕՐԻՄ.** Այո, այն երեխան, որ մեռաւ խոռուկից (group): Յիշո՞ւմ էք մենք ներջնեցինք նորան, թէ իւր մէջ երկու կին կայ: Եւ որ սպանող կինը պառկած է գահաւորակի վերայ և ինքը պէտք է սպանէ նորան: Այնտեղ պառկած էր տիկնիկը, իսկ մենք նորա ձեռքը տուինք դանակի: Աւերջը ներշնչեցինք, թէ բանի որ իւր հակառակորդն արդէն սպանուած է, ուրեմն և ինքը պէտք է գոհացում ստացած համարէ իրեն և այլ ևս չմտածէ այդ մասին: Յիշո՞ւմ էք նորա հայեադքը, երբ նա սպանում էք տիկնիկը:

**ԱԼԲԵՐՏ.** Այսինքն ինքն իրեն:

**ՄՕՐԻՄ.** Ճիշտ այժմ, ձեր հայեադքը նոյնն է արտայալտում:

**ԱԼԲԵՐՏ.** Ա... (Կարճ լոռութիւն): Բոլորովին հիացած եմ ձեզնով: Զարմանալի դիտող ոգի ունիք: Զեզ կարելի է յանդիմանել միայն այն բանի համար, որ ձեր դիտողութիւններից չէր հանում այն բոլոր օգուտները, որ կարող էք ստանալ նոցանից... Բայց ըստ ինքեան զարմանալի է ձեր այդ ունակութիւնը: Խնեներդ դատեցէք: Ասում էք, որ իմ հայեացքն մեան է այն կնոջ հայեացքին: Երեւակայեցէք, որ ես էլ նորա նման մի բան եմ արել: Այս առաւտ ես սպանութիւն եմ կատարել:

**ՄՕՐԻՄ.** Ի՞նչ:

**ԱԼԲԵՐՏ.** Գիտէք, ի՞նչն է իմ փոձերի ամենազլիաւոր գժուարութիւնը: Այն որ ես միշտ իմ փորձերս կատարել եմ հիւանդների վերայ, որոնք աւելի կանուխ էին մեռնում, բայ ես կարողանում էի իմ գլխաւոր դիտողութիւններս սկսել: Այ սօր ես մի նոր փորձ սկսեցի, որ վերջնական և վճռական դեր կկատարէ,—ես պատուաստեցի բոլորովին առողջ և ուժեղ մի տղամարդու...:

**ՄՕՐԻՍ.** 2եւ հաւատում: Լոկ միայն աչքի առաջ ունեսալով այն ընդհանուր վրդովմունքը, որով շրջապատուած էք այժմ, դուք չէիք համարձակիլ:

**ԱԼԲԵՐՏ.** 2էի համարձակի՞լ: Իհարկէ, ոչ հիւանդանոցում... այլ իմ տան մէջ եմ կատարել... 2է՞ որ ասացի ձեզ, այն բոպէին երբ ատրձանակը ձեռքս առայ, մի անզուսպ ցանկութիւն մէջս, որ անպատճառ դիտողութիւններիս... և գործիս վախճանը տեսնեմ. Ես գործի կպայ (Հանելով թղթապանակից մի կտոր թուղթ), Այս նոր արձանագրութիւնն էլ դրէք միւս ապացուցաթղթերի հետ. (Կարդում է):

«28 հոկտեմբեր. 43 տարեկան, ուժեղ, բոլորովին առողջ կազմուածքով մի տղամարդ: Ոչ մի ժառանգական հիւանդութիւն չունի: Առաւտեան 4 ժամին պատուաստուեցաւ ժանկաթցն (virus) № 2, սրսկուելով 10 ցենտիգրամ, աշ ծնից 3 սանտիմետր ցած. 4 ժամ և 50 րոպ. երեեցաւ մի փոքր ջերմ, դողոցով ու սիրտ-խառնոցով»:

**ՄՕՐԻՍ.** (Թուղթը խելով նորա ծեռքից). Դոննա, կատարեալ... չարագործ էք:

**ԱԼԲԵՐՏ.** Իմ դատավճիռս կարդալուց առաջ, մի մոռանաք գլխաւորը:

**ՄՕՐԻՍ.** Այսինքն:

**ԱԼԲԵՐՏ.** Որ այդ առողջ և ուժեղ անձնաւորութիւնը իւրանձի կատարեալ տէրն է և ինքն իրեն առաջարկեց իսձ:

**ՄՕՐԻՍ.** Ի՞նքը համաձայնեղ:

**ԱԼԲԵՐՏ.** Այո՛:

**ՄՕՐԻՍ.** Իմանալով, թէ ի՞նչ վտանգի է ենթարկւում:

**ԱԼԲԵՐՏ.** Անպայման, նա դիտէ, որ առաջ քան մաշը

կյափշտակէ իրեն սարսափելի տանջանքներ պատճառելով, ինքը կսկսէ կենդանի կենդանի փթիլ:

**ՄՕՐԻՍ.** Եւ նա այնքան ողջմիտ մարդ է, որ կարող էր այդ էլ երևակայել:

**ԱԼԲԵՐՏ.** Այո, չէնց այդ պատճառով: Նա մի մեծագործութիւն է տեսնում իւր արածի մէջ, հասկանալով միւնցն ժամանակ և նպատակի վեհութիւնը:

**ՄՕՐԻՍ.** Զափականց մեծ քայլ ու արարը է... եթէ ես լինէի ձեր տեղը՝ չէի համարձակիլ նորա աչքերի մէջ նայել, եւ ի՞նչ բանի համար: Որպէս զի նորա մասին խօսեն մամուլի մէջ, երբ դուք ձեր փառքով արբեցած կպատմէք նորա մասին, որպէս զի XX դարի հանրագիտակների մէջ նորա անունն էլ մտնէ: Բայց դեռ ևս այդ էլ խնդիր է: Այդպիսի անձնագոհութիւնները շատ անգամ անփառունակ են կորցու:

**ԱԼԲԵՐՏ.** Այդ մարդը իւր պատճառներն ունի առանց փառարանութիւնների ցանկութեան մաշ որոնելու:

**ՄՕՐԻՍ.** Երեկ որև է գժրաղդութիւն... խղճի խայթող ստիպում է...

**ԱԼԲԵՐՏ.** Ո՛չ, միայն զիտութեան ձարաւն է ստիպում: Երբ ես թշնը սրսկում էի նորա մէջ նկատեզի այն հետարրրառութեան կայծը, որ զգում էր և իւր մէջ զօրապետը պատերազմից առաջ... և որ ինքս էլ եմ զգում:

**ՄՕՐԻՍ.** Այ թէ ում կարելի է համեյատել ձեր ջրային շուշանների հետ: Լարի պէս ձգուած ցօղունները, որ կարծես այս րոպէիս պիտի կտրուէին:

**ԱԼԲԵՐՏ.** (Լալով): Եւ՝ յանկարծ նորա կտրուին առանց իրենց արեգակը... գտնել կարողանալու: Եւ ի՞նչ, եթէ ընութիւնը պարզելի է նորան Ճշմարտութիւնը որոնելու անյագ ծարաւ, որպէս զի երբէք, երբէք չկարողանայ գտնել այդ Ճշմարտութիւնը... Օ՛, ինչ զարչուրելի ստորութիւն...

**ՄՕՐԻՍ.** Այդպէս է բնութիւնը

**ԱԼԲԵՐՏ.** Կարծո՞ւմ էր: Սակայն յաղթութիւնը նա տալիս է միշտ ամենաուժեղին:

**ՄՕՐԻՍ.** 2եր աչքերի մէջ արցունք է փայլում:

**ԱԼԲԵՐՏ.** (Փայտուն). Բնութիւնն ինձ վերայ այդպիսի ազգեցութիւն ունի... բայց ժամանակն անցնում է: Ես ուշանում եմ... Մնաք բարեւ: Կանոնաւորապէս այդ մարդու հիւանդութեան մասին տեղեկութիւններ կուղարկեմ ձեզ: Մնաք բարեւ: (Արագ դուրս է զնում: Մօրիսը նորան ճանապարհ է ղնում եւ դառնում ու տեսնում է Հովհանին):

## ՏԵՍԱՐԱՆ VI

ԼՈՒԻԶԱ ԵՒ ՄՕՐԻՍ.

**ԼՈՒԻԶԱ** (Սաստիկ այլայլուած): Եյն մարդը, որին  
սպանել է ինքն է, ինքը...

**ՄՕՐԻՍ.** Ի՞նչ էք ասում... Անկարելի է:

**ԼՈՒԻԶԱ.** Ինքն է: Այսօր առաւտեան ժամը չորսին նո-  
րա մօտ ոչ ոք չէ եղել. նա մեն-մենակ էր: Եւ դուք ծաղրում  
էիք նորա տարակուսանքները, հեգնում էիք նորա վիշտ ու  
թափիծը: Եւ դուք բաջութիւն ունեցաք ջրելու նորա յաւիտե-  
սական կեանքի մասին ունեղած խոհերը, որը նա հայցում էր  
ձեզնից արտասուաթոր աչքերով... Մնաք բարեւ: Ես այլ ևս  
անկարող եմ... Ես չեմ կարող նորան միայնակ թողնել:

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Բ Ր

Գ. ԳԱՐԻՄԱՌՈՂ ՈՒԹԻՒՆ

Ա. Դործողութեան գեղոյլները (décoration): Երեկոյ է:

## ՏԵՍԱՐԱՆ I.

ԼՈՒԻԶԱ ԵՒ ԵՒԳԵՆԻԱ

**ԼՈՒԻԶԱՆ** ներս է մտնում, միևնոյն ժամանակ միւս դռնից  
մտնում է աղախինը և օդնում է գլխարկը, կրկնոցը, ձեռնոց-  
ները հանելու. յետոյ վառում է ճրագը և վարագոյը ցած  
ձգում: Լուիզան նոյն զգեստով, ինչ որ Բ. գոբծողութեան  
ժամանակ:

**ԼՈՒԻԶԱ.** Պարոնը գեռ ևս չէ վերադարձել...

ԵՒԳԵՆԻԱ. Ոչ գեռ ևս:

**ԼՈՒԻԶԱ.** Ոչ ոք չէ եկել:

ԵՒԳԵՆԻԱ. Ոչ, սիկին, ոչ ոք: Փառք Աստուծոյ, ամեն-  
օր սստիկան գալու խօյ չէ: Երէկ, երբ գերձկուհու մօտից էի  
վերադառնում, զանդ եմ տալիս և յանկարծ, դուռը բադ է  
անում սստիկանատան ծառայողը... քիչ էք մնում նուաղէի...

**ԼՈՒԻԶԱ.** Նամակ չկայ...

ԵՒԳԵՆԻԱ. 2եմ տեսել Լրագիրներն առանձնասենեա-  
կումն է: Կշրամայէք բերեմ...

**ԼՈՒԻԶԱ.** Բերէք և յետոյ տուէք կանխազգեստու:

ԵՒԳԵՆԻԱ. Իսկ ձաշին ի՞նչ զգեստ կշագնէք...

**ԼՈՒԻԶԱ.** Նոր զգեստ չեմ հաղնիլ:

ԵՒԳԵՆԻԱ. Լաւ էք անում: Ապա թէ ոչ այնպիսի յոդ-  
նած տեսք ունիք, որ... (Բերած շորը դնումէ բազկաթողի-  
վրայ):

**ԼՈՒԻԶԱ.** Ախ, մոռացել եմ բոլորովին: Ասացէք Բապտիս-  
տին, որ մեզ մօտ մի աղջիկ պիտի գայ. նա մեզ մօտ պիտի  
ապրէ: Բայց որտե՞ղ պիտի տեղաւորենք նորան,

ԵՒԳԵՆԻԱ. Սեղանատան կից սենեակը չէ՞ լինի:  
ԼՈՒԻԶԱ. Բայց ոյնտեղ էլ շատ փոքր է, ոդ չկայ... Ա-  
ւելի լաւ է կապոյտ սենեակը:  
ԵՒԳԵՆԻԱ. Այնտեղ այնքան ապուռ—ճպուռ կայ, որ...  
կարգի բերելն էլ ահազին նեղութիւն է... (Ներս է մտնում  
Ալբերտը):  
ԼՈՒԻԶԱ. Լաւ. այս րոպէիս ինքս կգամ, կտեսնեմ. (Եւ-  
զենիան դուրս է գնում):

## ՏԵՍԱՐԱՆ Ⅱ.

## ԼՈՒԻԶԱ ԵՒ ԱԼԲԵՐՏ.

ԼՈՒԻԶԱ. (Մօտենալով ամուսնուն): Ալբերտ...  
ԱԼԲԵՐՏ. (Կամացով հեռացնելով): Հա, լաւ, լաւ,  
ԼՈՒԻԶԱ. (Քաշուելով, անվտան): Դու ինձ դէ՞ն ես  
հրում:  
ԱԼԲԵՐՏ. Ո՛չ, բայց թող ինձ,  
ԼՈՒԻԶԱ. Գիտե՞ս, պէտք է ասեմ քեզ...  
ԱԼԲԵՐՏ. Ի՞նչ: Եթէ ինդիր է, այն ժամանակ, ինչ որ  
կամենում ես... Համաձայն եմ: Միայն, աղաջում եմ, առանց  
լաց ու կոծի: Հանդիսա թողէք ինձ, ի սեր Աստուծոյ, հան-  
դիսու... (Ընկնում է բազկաթոռի մէջ): Սատանան դիտէ թէ  
ինչ... Շան օր է քաշածս, շան:  
ԼՈՒԻԶԱ. Մի՞թէ նոր անախորժութիւններ են պատահել...  
ԱԼԲԵՐՏ. Ախ...  
ԼՈՒԻԶԱ. Ասա, պատմիր, տեսնեմ, որտե՞ղ ես եղել:  
ԱԼԲԵՐՏ. Ճեմարանում:  
ԼՈՒԻԶԱ. Դու ժամը մէկին ելար, իսկ ճեմարանում ե-  
րեքին...  
ԱԼԲԵՐՏ. Այցելեցի Մօրիս Կօրմիէին: Հանգստացարս  
ԼՈՒԻԶԱ. Մօրիս Կօրմիէի մօ՞տ, Ի՞նչ պատճառով:  
ԱԼԲԵՐՏ. Պէտք էր մի թուղթ, նոր վաւերագիր էլ յանձ-  
նէի նորան և ի գեպ հօսէի մի հարցի մասին...  
ԼՈՒԻԶԱ. Ի՞նչ հարցի:  
ԱԼԲԵՐՏ. Զարմանալով տեսնում եմ, և բաւական միա-  
մտութիւն էլ է իմ կողմից այդ ի հարկէ, որ մինչեւ այժմ չեմ  
նկատել, թէ մարդու մտաւոր զարգացումը շատ քիչ ազդեցու-

թիւն ունի նրա կեանքի վրայ, Գիտնականը իւր արարքների  
համար միշտ պատճառաբանութիւններ և բացատրութիւններ  
է զտնում զանազան խրթին հետևողութիւնների շնորհչիւ. մի-  
խեղձ հասարակ սայլապան հետևում է իւր բնազգին, այն ինչ  
երկուսն էլ նցյն բանն են անում: Երէկ, երբ դու ինձ մեղադ-  
րում էիր ոճրագործութեան մէջ... ես պաշտպանում էի և պէտք-  
է ասել, վատ չէի պաշտպանում: Ուզում եմ ասել, որ ասած-  
ներս խոր հայոգմունքի արդիւնք էին և ոչ թէ ինդրից խու-  
սափելու փորձ: Բարձրագոյն նպատակների համար կարելի է  
և ուշադրութիւն չգարձնել մի բանի անգութ միջոցների վրայ.  
Ես գոնէ այդպէս եմ համոզուած: Եւ այն րոպէին, երբ իմ  
բանականութիւնս ինձ արդարացնում է, ես գարձեալ իսղձի խայ-  
թոց եմ զգում, երբեք մի աւաղակ: Այն ժամանակ էլ ի՞նչ միտք-  
ունի չափել մարդու արարքը բանականութեան... զիտնականի  
բանականութեան հետ... եթէ դոքա իմ մէջ իսղձի խայթոց են  
ծնեցնում, ինչպէս հասարակ բանուորի մէջ:

ԼՈՒԻԶԱ. Եւ այդ էր ինդիրը:

ԱԼԲԵՐՏ. Մասամբ: Աչա ինդիրն ինչ էր.—պատճառն  
ի՞նչ է, որ ոչ հոգու անմահութեան, ոչ յաւիտենական կեան-  
քի զյութեան հաւատացող զիտնականը զոհում է իւր կեանքը  
իւր մերձաւորի համար: Մեղ համար շատ պարզ ու հասկանա-  
լի է այն մարդու արարքը, որն այդպէս է վարւում՝ երկնքում  
վարձատրուելու յուսով: Բայց ի՞նչ պատճառներից դրգուած ես  
զոհում եմ կեանքս այնպիսի սահմանափակ արարածների հա-  
մար, որանց ես արհամարհում եմ, զոհում եմ ինձ, որ ապրում  
եմ զիտութեամբ, առանց յաւիտենականի հաւատի: Եմ պարտքա-  
պիտի լինէր, անշուշտ, պահպանել եմ կեանքս, իրեւ ընտրեա-  
լի, իրեւ ամբոխի մէջ գտնուող և ամբոխի համար զործող մի  
լուսաւոր ջահի: Բայց որ զիտնականը զոհարերէ իրեն մի խումբ  
տգէտ մարդկանց հա ար... ախր չէ՞ որ սա նշանակում է կո-  
ղոպտել հասարակութիւնը... (Նեարլային ծիծաղով): Հետե-  
արար, եթէ ես իմ սրտի մէջ մի բուռն, անդուսպ տենչանը եմ  
զգում կեանքս որեւէ մէկի համար զոհարերելու... ապա՝ ես  
պէտք է զսպեմ, ընկճեմ ինձ և չթողնեմ ինձ... Զէ՞ որ այդպէս  
է: Պարզ չէ:

ԼՈՒԻԶԱ. Ի՞նչ պատասխան տուեց քեզ Կօրմիէն:

ԱԼԲԵՐՏ. Հարցն ուղղակի չգրի նորա առաջ Կարձ իս-  
տակցութիւնից յետոյ ես գուրս եկայ նորա մօտից... նա չափա-

զանց հեռու է այն հարցերից, որոնք ինձ զբաղեցնում են:  
**Ա.Ա.Ի.Ձ.Ա.** Դու ինքդ արդէն պատրաստի պատասխան ու  
նես քեզ համար... Այս, ինչ որ դու ինձ ասադիր, այն պատ-  
կերը, որ իմ առաջ նկարագրեցիր: Դու, իբրև բարի աստուա.  
ծութիւն, անցնում ես ժանտախտով և բորոտութեամբ վարա-  
կուածների միջով, տարածելով նոցա մէջ զիտութեան լոյսը,  
որից և նորա կենդանութիւն են ստանում... իսկ դու լիբը  
թորերով ներշնչում ես թունաւոր օդը... Դու քո կուռքն ու-  
նիս... Եւ եթէ դու զոհուես էլ, քո մոլեռանդութիւնն աւելի  
գոհացում ստացած կլինի:

**Ա.Ա.Բ.Ե.Բ.** Այդ բոլորը հիանալի է տեսականօրէն: Բայց  
ոչ յիրաւի այդպէս էլ է: Ճշմարիտ է: 2է՞ որ դա իմ ամրողը  
կեանքիս լուսատու սկզբունքն է: Բայց այնպիսի հակասութիւն  
այն բոլորի մէջ՝ ինչ որ մոածում, ինչ որ զգում և ինչ բանի  
համար որ տանջուում եմ... Տանջուող, լացող ու սիրող մարդկու-  
թեան հետ, պէտք է սիրել և լալ նորա հետ:

**Ա.Ա.Ի.Ձ.Ա.** (Կամենալով համբուրել նորան): Այսօր դու  
լաց ու արտասուրի տրամադրութեան մէջ ես:

**Ա.Ա.Բ.Ե.Բ.** (Խուսափելով): Մի վախենար... այդքան ոյժ  
մէջ կդժնուի... մինչև վերջը...

**Ա.Ա.Ի.Ձ.Ա.** Ասա, ինձ ես մասնակից ալ-ա տանջանքներիդ..  
Ասա, ինչու Կօրմիկին առաջարկած հարցդ շրթունքներիցդ չի  
հեռանում:

**Ա.Ա.Բ.Ե.Բ.** Է՛, դա կնոջ համար անելիք պատմութիւննե-  
րից չէ:

**Ա.Ա.Ի.Ձ.Ա.** Իսկ ես Մօրիսից աւելի լաւ կլմրռնեմ: Վաստա-  
հացիր մի անուս կնոջ սրտի վրայ, առ րոպէ մոռանալով քո  
կուռքդ: Այսօր կուռքդ դաւաճանել է քեզ... խաբել է...  
ես պարզ տեսնում եմ: Քո յուսահատ աղաղակներին նա միայն  
ըծախնդիր եղրակացութիւններով էր պատասխանում:

**Ա.Ա.Բ.Ե.Բ.** (Մ' եծամտութեամբ): Արդելում եմ, ընդ միշտ,  
այդ լեզուով խօսել այն բանի մասին, որը... որը ես յարգու-  
թեան: Եթէ առաջ զլուխ եմ խոնարհում. վերջ տանք խօսակցու-

**Ա.Ա.Ի.Ձ.Ա.** Մի բարկանայ, ինդընեմ: Եթէ զիտնայիր, թէ  
որչափ դժբաղդ եմ չէնդ այն բանի համար, որ չեմ կարողա-  
յանպէս կկամենայի ասել քեզ բոլորը, բոլորը...

**Ա.Ա.Բ.Ե.Բ.** Ասա, ուրեմն:

**Ա.Ա.Ի.Ձ.Ա.** Ալբերտ, դու ինձ ազատութիւն շնորհեցիր...  
որից ես հրաժարում եմ... ես կամենում եմ քո՛ կինը լինել:

**Ա.Ա.Բ.Ե.Բ.** Ընորհակալ եմ, Լուիզա: Բայց նախ քան կհա-  
մածայնեմ, պարտաւորութիւն եմ համարում յայտնել քեզ մի...  
բաւական անախորժ նորութիւն: Ինձ նախազգուշացրել են, որ  
գասախօսութիւններիս ժամանակ անախորժ գէպը եր են պատ-  
րաստում կատարել... և որ աւելի լաւ է մի փաքը համբերեմ,  
մինչեւ որ այդ խօսվութիւնները կշանգստանան, մի երկու ամ-  
սով բացակայեմ և դասերս սկսեմ այն ժամանակ, երբ ամեն  
ինչ խաղաղած կինի: Ուրիշ խօսքով, ինձ քաղաքավար եղա-  
նակով առաջարկում են հրաժարական տամ: Եւ ես վճռեցի,  
որ այդ հրաժարականս ընդ միշտ, վերջնական կինի: Այդ ժա-  
ման իմ յարգելի պատճառներս ունիմ, որ ոչ ոքի չեմ ասիլ:  
Ամեն բան թողնում, հեռանում եմ,— Ճեմարան, հիւանդանոց...  
Այժմ տեսնո՞ւմ ես, որ ինքնալոհութիւնդ քեզ շատ հեռու կը-  
տանէ: Քաղաքից հեռանալս—մի տեսակ մեղքիս խոստովանու-  
թիւն է, որ հասարակական կարծիքի առաջ ինձ բոլորովին  
պիտի ոչնչացնէ: Մի խօսքով՝ ես կորած մարդ եմ:

**Ա.Ա.Ի.Ձ.Ա.** Ուրեմն ինչ ես ժամադիր անելու:

**Ա.Ա.Բ.Ե.Բ.** Թողնել Փարիզը և քաշուել մի խուլ անկիւն:  
**Ա.Ա.Ի.Ձ.Ա.** Ես էլ եմ գալիս հետդ:

**Ա.Ա.Բ.Ե.Բ.** Դո՞ւ: Դու, որ լաց ու կոծ էիր դնում մի քանի  
շաբթով միայն զիւղ գնալու ժամանակ... Դեռ այսօր էր, որ  
չէիր կամենում ինձ հետ միասին ապրել՝ այստեղ, շրջապա-  
տուած աղգականներովդ... իսկ այժմ պատրաստ ես ընկերակցել  
ինձ իմ յափառենական միայնութեան վայրում...

**Ա.Ա.Ի.Ձ.Ա.** Այո՛:

**Ա.Ա.Բ.Ե.Բ.** Երէկ ուրիշ կողմից էր վիզում քամին: Ի՞նչ պա-  
տահաց Խղձի խայմոցի արգասիք... Եթէ այդպէս է, ապա ու-  
րեմն պէտք է ընորհաւորեմ քեզ... որովհետեւ քո յարաբերու-  
թիւնը գէպի ինձ... քո ձգտումը, որով աշխատում էիր  
կեանքիդ շրջանից կտրել, զէն ձգել ինձ, որը և պատճառ դար-  
ձաւ, որ վճռեցի ինքս առաջինը երես թեքեմ քեզնից: Սակայն  
յետոյ, պէտք է ասեմ, ես ուրիշ բան վճռեցի: Մի խօսքով՝  
կթողնես—կհեռանա ինձնից, թէ կհետեւ ինձ, միենոյն է,  
գործի ընթացքը դորանով ամենելին չի փոխուի: Ինչպէս կկա-  
մենաս: Դու արտայայտում ես ինձ քո սրտագին համակրու-

Թիւնդ, ես՝ դորա համար էլ շնորհակար եմ քեզնից:  
 ԱՌԻՒԶԱ. Իսկ ի՞նչ նոր բան ես վճռել:  
 ԱԼԲԵՐՏ. Ժամանակին կիմանաս:  
 ԱՌԻՒԶԱ. Ես հենց այժմ էլ գիտեմ:  
 ԱԼԲԵՐՏ. Օ՛, օ՛:  
 ԱՌԻՒԶԱ. Ես Մօրիսի մօտ էի... Ամեն ինչ լուղի... Եւ ես  
 քեզ աւելի լաւ ըմբռնեցի, բան նա:  
 ԱԼԲԵՐՏ. (Սառնութեամբ). Բացատրիր անկեղծօրէն:  
 Ի՞նչ հասկացար:  
 ԱՌԻՒԶԱ. Ինքդ քեզ վրայ նոյն փորձն ես արել, որից  
 մեռնում է այն մատաղ աղջիկը:  
 ԱԼԲԵՐՏ. Ուրեմն այդ է պատճառը, որ ինձ հետ զա-  
 լիս ես... Որովհետեւ երկար չեմ ապրելու:  
 ԱՌԻՒԶԱ. Սիրում եմ քեզ... ահա այն պատճառը, որ ինձ  
 կապում է հետդ: Այս, այս: Ալբերտ, հաւատա ասածիս, ես  
 հասկանում եմ քո կասկածամտութիւնդ. կատարելապէս արժա-  
 նի եմ դորան: Բայց և այնպէս, երդւում եմ, որ սիրտս քեզ  
 է պատկանում միայն Այն բոպէից, երբ գու իմ ամուսինս դար-  
 ձար, այն բոպէից նա քեզ է պատկանում: Դու չափազանց շատ  
 ես ցաւ պատճառել նորան... Դա, իհարկէ, քո մեղքը չէ: Դու  
 բարի ես: Երբէք մտքովդ էլ չէ անցել ինձ վիրաւորես, բայց  
 վիրաւորել ես... այս: Զարմանում ես: Ձե՞ս կարող ենթադրել,  
 որ կարելի է տանջուել, ապրելով հաւատարիմ և բարի ընկե-  
 րոջ հետ: Բայց մի յիշի՞ր, մտաբերիր, թէ ի՞նչ էինք մենք:  
 Դու գանգատում ես, թէ չնայելով որ զիտնականի խելք ունիս,  
 սակայն քո խիղճն էլ նշյն է, ինչ որ կոշտ-կոպիտ բանուորի-  
 նը: Իսկ ո՞վ էր սիրում ինձ: Սիայն կոշտ-կոպիտ բանուորի:  
 Ես դադարում էի քեզ համար գոյութիւն ունենալուց, հենց  
 որ գու այն բարձրազյն մտաւոր էակն էիր դառնում, որը ես  
 պաշտում էի: Դու այժմ լաւ պիտի հասկանաս ու ըմբռնես,  
 թէ ի՞նչ է նշանակում իրեն մեն-մենակ զգալ այն բոպէին,  
 երբ Կորմիէլ յօսից ես զալիս, որի առաջ գու իգուր քո սըր-  
 տի գաղտնարանի խորբերը բացեր... Ի՞նչպիսի աղաչանք-պա-  
 լատանք չեմ արել քեզ... բայց գու խուլ էիր: Ի վերջոյ ես  
 լուցի, պապանձուեցի... բայց լուսթիւնը միիթարել չէ կարող:  
 Պատաշէլ են բոպէներ, որ ես քեզ ատել եմ... տանել չեմ  
 կարողացել... վրդովուել եմ քո ներկայութեամբ: Բայց յար-  
 գանք միշտ տածել եմ դէպի քեզ: Ճշմարիտ է, երէկ իմ արած

ստորութիւն էր: Եւ զա յաւիտեանս ինձ համար մի ծանր կըշ:  
 տամբանք կլինի: Բայց ես չափազանց դժբաղդ էի, —ըս մզ  
 տեսնելով մի անխիղձ, մարդասպան, որ սպանում է այն իեղձ,  
 երիտասարդ աղջկանը և ես այդ վերջին, դէպի քեզ տածած,  
 զդացում էր, յարդանքս էլ կորցրի: Ես ազատութիւն էի որոնում  
 և օգտուեցայ նորանիդ միայն, որպէս միամտաբար վազէի Կոր-  
 միէի մօտ՝ հոգիս նրա առաջ բանայի: Ես կարծում էի որ կա-  
 րելի է զնալ չոգերանի մօտ խորհրդակցութեան, ինչպէս ակնա-  
 վաճառի մօտ ենք վազում զոյշարեղէն զնելու համար: Եւ զի-  
 տե՞ս, ինչ շաշէղի: Խմացյ, որ սիրում եմ քեզ և միմիայն քեզ:  
 ԱԼԲԵՐՏ. Ճշմարիտ: Ճշմարիտ ես ասում:  
 ԱՌԻՒԶԱ. Ինչո՞վ կարող եմ համոզել քեզ: Տեսնո՞ւմ ես  
 քեզ եմ տալիս կեանքս՝ ամբողջապէս: Ինձ էլ պատուաստիր քո  
 թշնը, ինչպէս պատուաստել ես Անտուանետային, ինչպէս քեզ:  
 Կապիր անդամահատական սեղանի վրայ և ակօսիր ինձ քո մա-  
 հացու պատուաստներովդ: Որքան աւելի տանջես, այնքան ա-  
 ւելի ես ինձ աւելի բազաւոր կղզամ: Վերջին կամիլ արիւնս  
 կրտամ առանց ինայելու քո մի վայրկեան միայն ինձնով հրճուե-  
 լու հայեցրի համար:

ԱԼԲԵՐՏ. (Ընկնելով նորա զիրկը): Լուիզա: Իմ սի-  
 րելի, անզին ամուսին: Ամբողջ կեանքս քեզ հետ եմ անդրել  
 առանդ քեզ ձանաշելու: Որքան քիչ բան զիտենք և ինչպիսի  
 ծանր զնով ենք ձեռք բերում այն, ինչ որ զիտենք: Եւ մենք  
 ամենք էլ այդպէս ենք, — Մօրիսը, ես, շատ բարձրից ենք նա-  
 յում թշուառ մարդկութեան վրայ և չենք տեսնում այն, ինչ  
 որ կնկատէր նոյն իսկ մանուկը: Մենք զիտում ենք հեռուն,  
 իսկ մեր մօտի պատը բաժանում է մեզ մեր կողըին տանջուզու-  
 ներից: Այն ինչ մենք էլ զերծ չենք տանջուելուց: Մենք կա-  
 րիք ունինք սիրող սրտի, մի կրծքի, որի վրայ կարողանայինք  
 զլուխ իջեցնել և լայ մեր զաւերը: Այս, ես լալիս եմ: Համար-  
 տանալու տեղիք չունիմ ամենախն... Իմ մեջս մի այլ էակի  
 զյութիւն եմ զգում, որ մարառում մեռնում է և որին հասկա-  
 նալ չեմ կարողանում: Դա ինքնազոհութիւն է պահանջում ինձ-  
 նիդ: Ես ինքնազոհութիւնը հրեշաւոր բան եմ համարում, —  
 բայց՝ ինքս ինձ սպանում եմ: Կեանքիս վախճանը անասելի  
 յիմարութիւնով է վերջանում: Մենել իբրև նահատակ, երբ  
 հաւատը չունիս... Անէութեան առաջ կարծես մեզ ցոյց տալ  
 ենք կամենում: (Մտնում է Եւգենիան):

ԱԼԲԵՐՏ Դէ ասացէր...

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱՆ. Զեզ մեղաղբում են... Ներեցէր, ինդրեմ, եթէ պյա մասին խօսում եմ... բայց անհանդիսա եմ:

ԱԼԲԵՐՏ Ի՞նչ յիմարութիւն է... Զեզ վախեցնում են:

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱՆ. Օ՛, ես երբէք երկիւղ չեմ կրում իմ մասին: Մի անգամ արդէն Աստուած ինձ փրկեց. մէկ էլ կփրէ՛

եթէ կամենում է: Բայց դո՞ւք: Զեզ վախնգ չէ սպառնում...

ԱԼԲԵՐՏ. Մի քանի յիմարների տարածած լուրեր են: Մի չաւատար:

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱՆ. Ա՛մ, որչափ ուրախ եմ: Միայն թէ ձեզ լան չպատահէր. վանքում ամենըն ինձ չեռ շատ լաւ են, բայց ոչ ոք իմ և իմ բաւականութեան մասին այնպէս հոգածութիւն չէ ցցց տուել, ինչպէս գուք: Դուք շատ անգամ շաղակրատում էիք չետու... Նարինջ էիք բերում, բաղցրաւենիք... Զկարծէք թէ բկիկի մէկն եմ. բայց այնքան զբաղուած մարդը, ինչպէս գուը...

ԱԼԲԵՐՏ. Եթի նորից սկսեցինը մեր յիմարութիւնները, եւ նրա համար, որ ինձ հաճոյախօսութիւն անէք...

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱՆ. Մի՛ յանդիմանէք ինձ, Ինչպէս չէք սիրում, երբ ձեզ գովուր են: (Կամացուլ): Դուք այնքան բարի, լաւ էք, որ իմ պատճառով տիրում էիք ես նկատում էի այդ, երբ գուը զիտում էիք այն կարմիր բշամիկը:

ԱԼԲԵՐՏ. Լաւ գիտող չէք երեսում:

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱՆ. Ոչ, ոչ, ինձ չէք կարող խարել: Հիւանդանոցում, երբ ես այնպէս վատ էի, ծանր... յիշում եմ... պառկած էի, մեռելի պէս, դուք միւս բժիշկներին ասացիր— «Փեղձ աղջիկ, մի շաբաթ հալիւ ապրէ»... Յետոյ, երբ, ամենը բը դուրս զնացին, դուք մենակ վերադարձաք և... այս տեղու... ծակեցիք...

ԱԼԲԵՐՏ. Ի՞նչ դո՞ւք...

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱՆ. Այս, ես զիտակցում էի, բայց չշարժուեցի... Այն ժամանակ իսկեռահեղի, որ նոր միջոց էք կամենում փորձել ինձ վրայ... մի յանդուգն միջոց... իսկ այժմ, երբ մայրապետն ասաց ինձ... այժմ հասկանում եմ, միանգամից զիսի ընկայ, թէ ի՞նչ էք արել ինձ հետ: Մեղնում քըլերից մէկը անցեալ ծննդեան դորանից մեռաւ: Մեծ զոհաբերութիւն էք պահանջուում նորան ինամել յանձն առնելը... մանաւանդ վերջին օրերը... (Լուլթիմ):

### ՏԵՍԱՐԱՆ III

ԼՈՒԻՁԱ, ԱԼԲԵՐՏ ԵՒ ԵՒՊԵՆԻԸ.

ԵՒՊԵՆԻԸ. Այն աղջիկը, որի մասին տիկինն ասում էր...  
ԼՈՒԻՁԱ. (Ալբերտին). Անտուանետտան է: Այսօր ես  
մնաստանի մայրապետին տեսայ և...

ԵՒՊԵՆԻԸ. Դուք կամմնում էիք տեսնել այն սենեակը,  
որտեղ պիտի ապրէ նա:

ԼՈՒԻՁԱ. Հրաւիրիր նորան այստեղ, Խոկոյն կզամ: (Եւ  
զենիան գնում է):

### ՏԵՍԱՐԱՆ IV.

ԼՈՒԻՁԱ, ԱԼԲԵՐՏ ԵՒ ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱՆ

ԼՈՒԻՁԱ. (Համբուրելով): Բարե, սիրելի վաւակս!

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱՆ. (Երկուակին): Մայրապետը ինդրեց կըր-  
կին իւր շնորհակալութիւնը մատուցանել ձեզ՝ մնաստանի  
կողմից:

ԼՈՒԻՁԱ. Տէր Աստուած, նա արդէն ինձ չափից աւելի  
շնորհակալութիւն յայտնեց... կերթամ, տեսնեմ, որտեղ պիտի  
տեղաւորենք ձեզ՝ Ամբողջ օրն զբաղուած էի: (Դուրս է գնում):

### ՏԵՍԱՐԱՆ V.

ԱԼԲԵՐՏ ԵՒ ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱՆ.

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱՆ. (Մօտենալով Ալբերտին): Պ. բժիշկ!  
Ես կամենում էի ձեզ ասել... Այսօր ինձ հարց ու փորձ արին...  
ԱԼԲԵՐՏ. Ո՞վ:

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱՆ. Մայրապետը:

ԱԼԲԵՐՏ. Ի՞նչի մասին:

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱՆ. Հիւանդանոցում եղած ժամանակ ձեր  
հոգատարութեան մասին:

ԱԼԲԵՐՏ. Է՛, յետոյ ի՞նչ: Կարծում եմ, որ լաւ զուցում  
տուած պիտի լիսիք, եթէ ինձ են հաւատում ու յանձնում...

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱՆ. Անհոգ եղէք, պ. բժիշկ: Բայց և այնպէս  
ես հասկացայ...

ԱԼԲԵՐՏ. Ի՞չ անուն են տալիս ինձականերին։  
ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱՅ. Զեմ համանում ի՞նչ էք ասում։  
ԱԼԲԵՐՏ. Մարդասպան, ոճրագործ, այնպէս չէ։  
ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱՅ. Այ, ես զիտէի, որ դուք տանջւում էք։  
Բայց պէտք չէ։ Եթէ այն ժամանակ իմ համաձայնութիւնս  
հարցնէիք, իսկոյն կհամաձայնէի. Միթէ դուք ինձ այնքան յիմար,  
անհամացող էք համարում, որ չեմ իմանում, թէ իմ չիւան-  
գութիւնս կարող է միշտ տալ մի խուճը թշուառների բժշկու-  
թեան։ Ես կամենում էի ողորմած քոյր դառնալ և ամրող  
կեանքս չիւանդներին նուիրել։ Եւ աչա փոխանակ կեանքս  
կամաց-կամաց, կաթի կաթի տալու, մի անզամից եմ տալիս  
(Հնկում է Ալբերտի ստրելը). Երբ ես իմացայ թէ ինչ  
բանի մէջ են մոլագրում ձեզ, այն ժամանակ իսկոյն ըմբռնե-  
ցի, որ եթէ ձեզ թոյլ չոտն փորձեր կատարել, դուք այդ  
փորձերը ձեզ վրայ կանէք. Մի անէք այդ բանը, պ. բժիշկ։  
Ես ինքս պատրաստ եմ ձեր զիտողութիւնների համար ձա-  
ռայել։

ԱԼԲԵՐՏ. Իսկ իմ՝ զնութեան մատաժել, որ կատարած  
սիսալս, ինքս ինձ ներել չեմ կարող և չէնց այդ պատճառով  
էլ կարող եմ անձնասպանութիւն զործել։

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱՅ. Երկիխողով։ Անձնասպանութիւն։ Դուք։  
Ամրող աշխարհը զրկել ձեզ պէս մարդուց, մի թշուառ աղջկայ  
պատճառով։

ԱԼԲԵՐՏ. Իսկ իմ ցանկութիւնս այդպէս էք. Եթէ զես ևս  
այժմ ինձ կենդանի ես տեսնում, այդ էլ այն պատճառով, որ  
մի առ ժամանակ միայն յետաձգեցի. Ես կամենում եմ զիտո-  
ղութիւններիս վախճանը տեսնել։ Իսկապէս այդպիսի չետա-  
րքրութիւնը ներելի է։

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱՅ. Ի՞նչ ասել կուղի, եթէ զորանով ու-  
րիշներին էք փրկում։ Դուք ձեզ այնպէս էք արդարաց-  
նում, որ կարծէք ոճրագործ լինիք։ Այ, եթէ չերք քերքացնէք  
ձեր զիտողութիւններն, այն ժամանակ դուք յիրաւի ոճ-  
րագործ կլինէք։ Դուք զիտութեան համար էք ստեղծուել։  
Դժբաղտաբար, դուք կրօնական զզացում չունիք, ուստի  
և պարտաւորուած էք այդքան երկար դատողութիւններ  
անելու, որպէսզի բարի լինիք։ Իսկ ես, եթէ կրօնասէք  
չլինէի, շատ բա՞ն կարժենայի. Դուք, կարծես, զարմա-  
նում էք, որ ես պատրաստ եմ ամչուան։ Իսկ ես, բաղդաւոր  
եմ զզում ինձ, որ զոնէ առիթ կունենամ մօտենալու մեզ՝

մարդկային ցեղի համար տանջուած Խաչեցեալին։  
ԱԼԲԵՐՏ. Բայց դու զդում ես, թէ ինչպիսի ոյժ ես  
ներշնչում ինձ։ Դու չես ստիպում ինձ, որ ես երես թեքեմ,  
դաւաճանեմ իմ կուռքին։ Դու չես սկսի ծաղրել նորան։ Կա-  
րող եմ յայտնել քեզ իմ որոշում։ Դու կարող ես ըմբռնել  
այդ, որովհետեւ արդէն գիտակից ես՝ առաջինը մատնացոյց ա-  
նելով գորա վրայ։ Ինձ վրայ էլ եմ պատուասել այն, ինչ որ քեզ  
վերայ եմ կատարել։ Այժմ պէտք է օգտուեմ կեանքիս մնացած  
վերջին օրերից։ Ես կլարեմ կենսական բոլոր ոյժերս և կրկնակի  
կեանքով կաշխատեմ ապրել, —մինչեւ վերջին շունչս զիտելով  
մեզ՝ երկուսիս։ Քո աչքերը փայլում են։ Երակներիդ մէջ  
էլ նոյն արիւնն է հոսում, ինչ որ իմիս մէջ։ Սյո՛ւ Երեխան  
ամներից աւելի լաւ ըմբռնեց ինձ։ Պատճառն ի՞նչ է։ Ո՞րտեղից  
ենր ստանում այդ մեծ ոյժը։

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱՅ. Աստծուց, պ. բժիշկ։ (Մտնումէ Լուի-  
զան)։

## ՏԵՍՍՈՐԱՆ VI

ԱԼԲԵՐՏ, ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱՅ. Եի ԼՈՒԻԶԱՅ.

ԱԼԲ. ԲՏ. (Յոյց տալով Անտուանետտային): Ամեն ինչ  
զիտէ։

ԼՈՒԻԶԱՅ. Եւ ներո՞ւմ է քեզ։

ԱԼԲԵՐՏ. Ներողութեան համար խօսք իսկ չէ եղել Այն,  
ինչ որ ես ձեռք եմ բերել մտաւոր աշխատանքի աննկարագ-  
րելի շանքերի շնորհիւ, սա առաջարկեց մարդ հիացնող պար  
զութեաւը, —զօհարերել ինքն իրեն մերձաւորների բարօրու-  
թեան համար։ Գերեզմանի ձանապարհն կանգնած է ժպիտն  
երեսին ու շրմունքներին և այնտեղից ինձ համար ես յուսոյ  
ձառագայթներ է ուղարկում։ Տեսնում ես, ամենահրաշալի  
զիտն անգամ անպաշտպան է մարդկանց աննպաստ դատաս  
նից, այն ինչ, եթէ մի երեխայի կեանքն ազատելու համար  
ջուրը նետուեմ, այն ժամանակ ամենքը՝ հարուստ թէ աղքատ,  
ամենքը կզավարանեն ինձ։ Հետեարար, կայ մեր արարքների  
ու զործերի մէջ մի բան, որ կարող է միացնել, շաղկապել  
մարդկանց իւր զերազցին զեղով։ Եւ այդ զեղեղկութիւնը այն  
ձգտում է, որ մարդկութիւնն ունի զէպի միակ լոյսը, ես  
այդ լոյսը որոնումեմ զինիս, բանականութեանս մէջ, այն ինչ

պէտք է որոնել ու դանել միայն սրտի մկը: Մերձաւորի համար տանջուելու այդ անյաղուրդ կարիքն ամենքիս մէջ կայ, որքան էլ մենք անչեթեթ համարենք այդ զգացումը: Մի քանի ժամ առաջ թիւ էր միում շնչասպառ լինէի ինձ ամբողջապէս տիրապ կատող զայրոյթից, երբ այդ անչեթեթ, ուրիշների համար կեանքս զոհաբերելու անտեղի կարիքն էի զգում մէջս: Կօրմիէի բառերն էի կրկնում, — «Բնութիւնը սոսր անշնորհապարտութեամբ միայն կպատասխանէ քեզ»: Ասելը հեշտ էւ հայց յիշ է միայն մարմիի, կեանքի վրայ, բայց ոչ մտքի վրայ: Մարի, բանակիսութեան առաջ երբեկից պատկերացած ամենազերացն նշանը — խաչն է, այդ տանջանքի գործիքը: Ո՞րտեղից է բղխում այդ շժը, որ ամբողջ աշխարհի մարդկութիւնը ըերած, կապում է նորա հետ մի ընդհանուր մտքով, ձգումայ, — զոհաբերել իրեն իւր մերձաւորի համար: Ծովային մակընթացութիւնը մօտաւոր լուսատուի ձգողական շյժն է մատնացոյց անում: Միթէ մեր հոգեկան, անվերջ մակընթացութիւնները ձգւում, բաշւում են դատարկ, ամեն ինչից զուրկ երկնքից:

ԼՈՒԻԶԱ. Դու հաւատո՞ւմ ես:

ԱԼԲԵՐՏ. Ո՛չ: Որպէս զի հաւատամ, պէտք է մի շոշափենի, տեսանելի փաստ ունենամ. իսկ մենք շատ հեռու ենք զորանից: Օ՛, բանականութիւնը: Ինձ այնտեղ չէ առաջնորդում,

ԼՈՒԻԶԱ. Միայն թէ յուսահատութեան չտանէ:

ԱԼԲԵՐՏ. Գործ, զործ: Ես կաշխատեմ գործել մինչև վերջը:

ԼՈՒԻԶԱ. Բայց արդեօք հոգեկան անդրբութիւն կտայ նա քեզ:

ԱԼԲԵՐՏ. Ես չեմ հաւատում Աստուծոյ, բայց մեռնում եմ այնպէս, որ կարծես թէ հաւատում էի նորան: Ես հենց այդ տեղ է և իմ հոգեկան անդրբութիւնս: Ես ինձ առողդ եմ ըդգում ոյժերի նոր հոսանք եմ զգում մէջս, որովհետեւ ինձ հասկացաւ այս երեխան, որ մեռնում է ինձ հետ: Աչա թէ որտեղ է բղխում իմ զժու: Իմ փրկութիւնս այն է, որ մի խեղճ, տղէտ աղջիկ՝ եմ ձեռքից բռնած առաջնորդում է գէպի մի անյայտ, զեղեցիկ լցոյ: Տեսնում ես, այժմ կարող եմ դատել իրրե զիտական, բայց գործել՝ ինչպէս մի սովորական աղնիւ և պարզ մարդ: Կհասնենք արդեօք այն աստիճանին, որպէս զի միմիայն բանականութեամբ կարողանանք ըմբռնել բարդական


բարձրագոյն գրութիւնները: Այս գէպըում բանականութիւնը իւր որոշ տրամաբանութիւնն ունի, իսկ հօգին՝ իւրը, որ անհամարնալի է ինձ համար, բայց պարզ ու որոշ Անտուանետտայի համար: Եւ երբ հարց է ծագում, թէ ի՞նչպէս մեռներ, այսինքն աննպատակ չկորչենք՝ շանսատակ չլինենք, այլ աղնիւ ծանապարհով մահ ընդունենք, այդ գէպըում մենք՝ փիլիսոփաներս պէտք է բարձրագոյն տրամաբանութեան դասեր առնենք հասարակ, խոնարհ Անտուանետտաներից, որոնք պաշտում, հօղի ևն տալիս Աստուծոյ համար և օրինակ վերդնենք այնպիսի պարզ սրտերից, որոնք սիրում հերոսաբար՝ ինչպէս գուշ:

ԼՈՒԻԶԱ. (Գրկախանունելով նորան): Ի՞նչ, գու կարող ես ասել, որ մեզնից սովորելու բան ունիս Դո՞ւ: Օ՛, Ալբերտ: Այժմ տեսնում եմ, որ մեր մէջ կարող է զյութիւն ունենալ, միութիւն: Այժմ մենք նոր կեանք կսանանք կեանքի այն եղանակով, որ միշտ երազում էի: Մեր մէջ այլ ես ոչ մի խըրոց, արգելառիթ զյութիւն չունի:

ԱԼԲԵՐՏ. (Ազատուելով): Արգելառիթ չկայր (Ցոյց տալով կրծքի վրայ պատուաստի տեղը): Մոռացել ես:

Վ. Ա Ր Ա Գ Ո Յ Բ





ՀՀ Ազգային գրադարան



NL0315335

6225

